ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Մ. ԲԱԴԱԼՅԱՆ
Ն. Գ. ՂԱՐԻԲՅԱՆ

ՏԱՐԲԵՐ ՍՆԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄԻՑԵԼԻՈՒՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

Ս. Մ. ԲԱԴԱԼՅԱՆ, Ն. Գ. ՂԱՐԻԲՅԱՆ

ՏԱՐԲԵՐ ՍՆԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄԻՑԵԼԻՈՒՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հավաքածուների կատալոգ և ատլաս)

S. M. BADALYAN, N. G. GHARIBYAN

CHARACTERISTICS OF MYCELIAL STRUCTURES OF DIFFERENT FUNGAL COLLECTIONS

(Catalogue and Atlas of Collections)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 582.28
ԳՄԴ 28.591
Բ 141

Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի
գիտխորհրդի կողմից

Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝ Է. Գ. Աֆրիկյան և Լ. Լ. Օսիպյան
Reviewers: Academicians E. G. Afrikyan and L. L. Ossipyan

Բադալյան Ս. Մ., Ղարիբյան Ն. Գ.
Բ 141 **Տարբեր սնկային կուլտուրաների միցելիումի կառուցվածքային առանձնահատկությունները** - Եր.: ԵՊՀ հրատ., 2017 թ., 176 էջ:

Գրքում ներկայացված են ագարիկոմիցետային և միկրոսկոպիկ սնկերի միցելիումի կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց բնօրինակ լուսանկարների ատլասը և կուլտուրաների հավաքածուների կատալոգը: Վերջինս պարունակում է 72 ցեղերին պատկանող 177 տեսակների 573 շտամներ: Միցելիումի, մասնավորապես անամորֆի կարգաբանական նշանակության որոշ կառուցվածքներ նկարագրվում են առաջին անգամ: Կենսատեխնոլոգիական նշանակության ուտելի դեղասնկերի տեսակային նկարագրությունները ներառում են միցելիումի և պտղամարմնի առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանում դրանց տարածվածությունը:

Նախատեսված է սնկաբանների, սնկաբույծների, մանրէաբանների, կենսատեխնոլոգների, դեղագետների, կենսաբանության և դեղագիտության ֆակուլտետների ուսանողների համար:

Badalyan S. M., Gharibyan N. G.
Characteristics of mycelial structures of different fungal collections – Yerevan: YSU Press, 2017, p. 176.

The characteristics of mycelial structures of Agaricomycetes and microscopic fungi, the Catalogue of Culture Collections and Atlas of original microphotos are presented. The catalogue includes 573 strains and 177 species from 72 genera. Several of described taxonomically valuable mycelial and anamorphic structures are originally reported. Species description of biotechnologically valuable edible and medicinal mushrooms, including characteristics of mycelia and fruiting bodies, as well as their distribution in Armenia are presented.

The book is intended for mycologists, microbiologists, biotechnologists, pharmacists, mushroom growers, Masters and PhD students of the Faculties of Biology and Pharmacy.

ՀՏԴ 582.28
ԳՄԴ 28.591

ISBN 978-5-8084-2157-8

ԱՌԱՋԱԲԱՆ

Կենսաբանական ռեսուրսների կենտրոնների (ԿՌԿ) ստեղծումը գիտական, մասնավորապես կենսատեխնոլոգիական և կենսաբժշկագիտական հետազոտությունների կազմակերպման և իրականացման անհրաժեշտ փուլ է: ԿՌԿ-ները ներառում են կուլտիվացվող օրգանիզմների մաքուր կուլտուրաների հավաքածուներ (ԿՀ) և դրանց վերաբերյալ համապատասխան տվյալների բազաներ (ՏԲ): Պահպանելով բնական ռեսուրսների կենսունակությունը՝ ԿՌԿ-ները դրանց հասանելի են դարձնում հիմնարար և կիրառական հետազոտությունների համար:

Կարգաբանական տարբեր խմբերին պատկանող սնկային ԿՀ-ի հիմնադրումը ոչ միայն դրանց կենսաբազմազանության և գենետիկական ռեսուրսների պահպանման, այլև բազմակողմանի ուսումնասիրման հնարավորություն է ստեղծում:

Բազիդիալ ագարիկոմիցետային սնկերի (բաժին Basidiomycota, դաս Agaricomycetes) բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց համային բարձր արժեքով և դեղաբանական հատկություններով վաղուց են հայտնի մարդկությանը: Դրանց ուտելի տեսակները օժտված են ցածր կալորիականությամբ՝ սպիտակուցի բարձր և ճարպերի ցածր պարունակությամբ: Ագարիկոմիցետային սնկերում առկա են նաև չհագեցած ճարպաթթուներ, վիտամիններ (B, C, D, K) և միկրոէլեմենտներ (կալիում, ֆոսֆոր): Ժամանակակից գիտական տվյալները վկայում են, որ այս սնկերը նաև զանազան կենսաակտիվ միացությունների (պոլիսախարիդներ, պեպտիդագլյուկաններ, տերպենոիդներ, ֆենոլային միացություններ և այլն) և ֆերմենտների (պրոտեոլիտիկ, լիգնոլիտիկ և այլն) աղբյուր են, որոնք օժտված են տարբեր թերապևտիկ ազդեցությամբ (իմունախթանիչ, հակաուռուցքային, հակասնկային, հակաբակտերիալ, հիպոգլիկեմային, հակաօքսիդանտային, ֆիբրինոլիտիկ, թրոմբոլիտիկ և այլն): Այս առումով հատկապես հայտնի են ագարիկոմիցետային ծառաբնակ աբեթասնկերը (կարգ Polyporales, Hymenochaetales և այլն), որոնց արհեստական պայմաններում հեշտությամբ վերարտադրվելու ունակությունը նպաստում է դրանց մաքուր կուլտուրաների մասնագիտացված հավաքածուների ստեղծմանը: Վերջինս կարևոր նշանակություն ունի սնկերի կենսատեխնոլոգիական աճեցման, դեղաբանական հատկությունների ուսումնասիրման, սնկային կենսատեխարտադրանքների ստացման և կիրառման հեռանկարների բացահայտման տեսանկյունից:

Ագարիկոմիցետային սնկերի գենետիկական ռեսուրսների պահպանման և կենսաբազմազանության ուսումնասիրման նպատակով մաքուր կուլտուրաների հավաքածուների հիմնադրման, միցելիումի կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրման և կենսատեխնոլոգիական ներուժի բացահայտմանն ուղղված աշխատանքները Հայաստանում նախաձեռնվել են 1982 թվականին: Վեգետատիվ միցելիումի հետազոտություններն իրականացվել են մակերեսային և խորքային կուլտուրայի պայմաններում: Ուսումնասիրվել են միցելիումի կենսատեխնոլոգիական աճեցման և կենսազանգվածի կուտակման բարենպաստ պայմանները (ջերմաստիճան, սննդամիջավայրի բաղադրություն և թթվայնություն), նկարագրվել են գաղութների և պելետների մորֆոլոգիան, պտղամարմիններ (տելոմորֆ) առաջացնելու ունակությունը, գնահատվել է դրանց կարգաբանական նշանակությունը:

Ագարիկոմիցետային սնկերի միցելիումի և կենսացիկլի անսեռ փուլի՝ անամորֆի մորֆոլոգիական ուսումնասիրությունները բացահայտել են կարգաբանական նշանակության մի շարք վեգետատիվ կառուցվածքներ, որոնցից շատերը նկարագրվել են առաջին անգամ: Սրանք կարևոր են կենսատեխնոլոգիական աճեցման ընթացքում սնկային կուլտուրաների ճիշտ նույնականացման համար:

Ստացվել են տվյալներ որոշ դեղասնկերի պտղամարմինների և միցելիումի քիմիական կազմի (մոնո-, պոլիսախարիդներ, ֆենոլային և տերպենային միացություններ, սպիտակուցներ, ճարպաթթուներ և այլն) վերաբերյալ, ուսումնասիրվել են դրանց դեղաբանական հատկությունները (իմունախթանիչ, ցիտոտոքսիկ, հակասնկային, հակաբակտերիալ, հակավիրուսային, միտոգեն/ռեգեներացնող, ֆիբրինոլիտիկ, թրոմբոլիտիկ, հակաօքսիդանտային):

Վերը նշված ուղղություններով ստացված հիմնական արդյունքները ամփոփված են հեղինակների գիտական հրապարակումներում (տե՛ս էջ 163):

Ագարիկոմիցետային ուտելի սնկերի և դեղասնկերի շատ տեսակներ ունեն կենսատեխնոլոգիական մեծ ներուժ պտղամարմինների արհեստական աճեցման, դեղաբանական նշանակության կենսաակտիվ միացությունների, ֆերմենտների, սննդային հավելումների և այլ կենսատեխարտադրանքների ստացման տեսակետից: Գլուխ 1-ում բերված որոշ տեսակների նկարագրությունները ներառում են ոչ միայն պտղամարմնի՝ տելոմորֆի, այլև վեգետատիվ միցելիումի և անամորֆի առանձնահատկություններ: Բերվում է նաև Հայաստանում դրանց ռեսուրսների առկայության և տարածվածության վերաբերյալ տեղեկատվություն:

Գիրքը նախատեսված է սնկաբանների, մանրէաբանների, կենսատեխնոլոգների, սնկաբույծների, դեղագետների, կենսաբանության և դեղագիտության ֆակուլտետների ուսանողների և ասպիրանտների համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ՀՀ ԳՊԿ, ԴԱԱԴ, ՆԱՏՕ, ԳԿՀԱՖ և այլ կազմակերպություններին գիտական հետազոտություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

FOREWORD

Biological Resource Centers (BRC) of different living organisms constitute an essential part of the scientific and technological infrastructure of Life sciences, particularly biotechnology and biomedicine. They are intended for preserving the natural resources and making them available for fundamental and applied scientific research. The BRCs involve Culture Collections (CC) and Databases (DB) of cultivable organisms providing information relevant to these collections.

Teh establishment and maintenance of CC of different taxonomic groups of fungi are aimed at preservation of fungal biodiversity, genetic resources and investigation of developmental processes.

Agaricomycetes mushrooms (phylum Basidiomycota, class Agaricomycetes) are widely appreciated all over the world for their nutritional value and medicinal properties. They possess a low energy and glucose level, high protein content with balanced amino acids, very low sodium concentration and fat content with high percentage of unsaturated fatty acids. Agaricomycetes have a high content of several vitamins (B, C, D, K), minerals (potassium, phosphorus), trace elements, such as selenium and substantial amount of dietary fibers.

Modern scientific data has revealed that many Agaricomycetes species represent an unlimited source of bioactive compounds (polysaccharides, peptidoglucans, terpenoids, phenolics, etc.) and enzymes (proteolytic, ligninolytic, etc.) with different therapeutic effects (immune-stimulating, antitumor, antifungal, antibacterial, hypoglycemic, antioxidant, fibrinolytic, thrombolytic, etc.). They are an example of molecular diversity with recognized potential in discovery and development of novel mushroom-based biotech products (mycopharmaceuticals, nutriceuticals, nutraceuticals and cosmeceuticals).

The biological characteristics of mycelia, such as fast growth and reproduction in culture conditions of Agaricomycetes wood-inhabiting bracket fungi (orders Polyporales, Hymenochaetales. etc.), promoted the establishment of specialized CC, which are of valuable importance to study their biodiversity, modern taxonomy and phylogeny, biochemistry, physiology and biotechnological potential to reveal perspectives for their furthen usage in bioindustry and biomedicine.

The establishment of CC of Agaricomycetes mushrooms in Armenia was initiated in 1982. The study of biological characteristics and biotechnological potential of different collections was realized in static and submerged cultures. The favourable growth conditions (temperature, medium composition, pH) for biotechnological cultivation of mycelia of selected species/strains were revealed. The study of morphology of mycelial colonies and pellets, anamorphs - asexual stage in the life cycle, as well as growth parameters, biomass formation and fruiting body (teleomorph) development was performed. Several mycelial and anamorphic characteristics with taxonomic significance were originally described. They are used for correct identification of fungal cultures during biotechnological cultivation.

The data on chemical composition (mono- and polysaccharides, phenolics, terpenoids, proteins, fatty acids, etc.) of mycelial and fruiting body extracts of selected mushrooms were reported. Medicinal properties (immune-modulating, cytotoxic, antifungal, antibacterial, antiviral, mitogenic/regenerative, fibrinolytic, thrombolytic, and antioxidant) of several collections were screened and biotechnological potential was estimated.

The results of the above mentioned research were reported in scientific publications of authors of the current book (see p. 163).

Several biotechnologically cultivable Agaricomycetes fungi are used in the production of fruiting bodies, mycopharmaceuticals, health enhancing food additives, enzymes and other biotech-products. In Chapter 1, a complete description of selected species includes characteristics of fruiting bodies, vegetative mycelia and anamorph(s). Information about their resource potential and distribution in Armenia is also given.

The book is intended for mycologists, microbiologists, biotechnologists, pharmacists, mushroom growers, as well as Master and PhD students of the Faculties of Biology and Pharmacy.

Authors are thankful to SCS RA, DAAD, NATO, ANSEF and other scientific organizations for financial support.

ԳԼՈՒԽ 1

ԱԳԱՐԻԿՈՄԻՑԵՏԱՅԻՆ ՍՆԿԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՏԵԼՈՄՈՐՖԻ և ՎԵԳԵՏԱՏԻՎ ՄԻՑԵԼԻՈՒՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

CHAPTER 1

CHARACTERISTICS OF TELEOMORPHS AND VEGETATIVE MYCELIA OF SEVERAL COLLECTIONS OF AGARICOMYCETES FUNGI

Բազիդիալ ագարիկոմիցետային սնկերի (բաժին Basidiomycota, դաս Agaricomycetes) կուլտուրաների հավաքածուների միցելիալ գաղութների և միկրոկառուցվածքների մորֆոլոգիական նկարագրություննե-րը իրականացվել են ագարային տարբեր սննդամիջավայրերի վրա (pH 6.0, 25 °C)։ Ստորև բերվում է որոշ տեսակների գաղութների և միցելիալ կառուցվածքների նկարագրությունը 1.5% գարեջրային քաղցու-ագարի վրա, ինչպես նաև քաղցու-ջուր խորքային կուլտուրայում (200 պտ/ր) (Աղյուսակ 1, Table 1)։

***Armillaria mellea* (Vahl.) P. Kumm.**
Կոճղասունկ իսկական, աշնանային, մեղրասունկ

Գլխարկը՝ 4.0-12.0 սմ տրամագծով, եզրերը՝ դեպի ներս շրջված, ու-ռուցիկ, կենտրոնում՝ թմբիկով, օխրագույն կամ դեղնադարչնագույն, ծածկված բազմաթիվ դարչնագույն թեփուկներով։

Հիմենաֆորի թիթեղները թույլ վայր իջնող, սպիտակ կամ փայտա-գույն։

Ոտիկը՝ 7.0-10 x 1.0-1.5 սմ, հիմքում՝ հաստացող, մի քանի ոտիկնե-րով սերտաճած։ Օղակը՝ սպիտակ, պահպանվող։

Սպորները՝ 8.5-9.0 x 4.8-6.0 մկմ, ձվաձև, անգույն։

Աճում է անտառներում և այգիներում՝ կենդանի ծառերի, կոճղերի և արմատների վրա մեծ խմբերով։

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում։ Վտանգավոր մակաբույծ է։

Ուտելի դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Լոռու, Իջևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, բամբականման, ավելի ուշ՝ մուգ շագանակագույն, կաշվենման, եզրը՝ բլթակավոր կամ ալիքաձև, ագարը՝ մուգ շագանակագույն: Աճում է դանդաղ, կոնցենտրիկ շրջաններով, ագարից վեր բարձրացող միցելիումով: Առաջացնում է ձևավորված ռիզոմորֆներ (Նկար 3d): Աճման միջին արագությունը՝ 0.8-1.2 մմ/օր:

Դիպլոիդ միցելիումի ճարմանդները բացակայում են: Առկա են բազմաթիվ հիֆային անաստոմոզներ, հիալինային կուտիկուլային բջիջներ:

***Coprinellus bisporus* (J. E. Lange) Vilgalys, Hopple & Jacq. Johnson.**
Գոմաղբասունկ երկսպորանի

Գլխարկը՝ փակված՝ 16.0 մմ (բարձրություն) x 12.0 մմ (լայնություն), բացված՝ տրամագիծը մինչև 20.0 մմ, կենտրոնում՝ օխրադարչնագույն, եզրերում՝ դժգույն, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սպիտակ, ավելի ուշ՝ մուգ մոխրագույն:

Ոտիկը՝ 40.0-80.0 x 1.0-2.0 մմ, սպիտակավուն:

Սպորները՝ 9.7-13.7 x 6.1-8.4 մկմ, էլիպսաձևից օվալ, արտակենտրոն ծլման ելուստով:

Հեշտությամբ տարբերակվում է երկսպորանի բազիդիումներով:

Աճում է գոմաղբի և քայքայվող ծղոտի վրա խմբերով:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, դեղնավուն, ավելի ուշ՝ տեղ-տեղ մուգ դեղին, ժանգագույն, բամբակաքեչայանման: Աճման միջին արագությունը՝ 4.2-4.6 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պտղամարմիններ (Նկար 6f):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Առկա է ստերիլ *Ozonium* տիպի անամորֆ՝ զուգահեռ, սեպտավորված ժանգադարչնագույն հիֆային ձգունների տեսքով միցելիում: Առաջացնում է բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ, ալոցիստեր, հիֆոցիստեր և քլամիդոսպորներ (Նկար 20c,h) (Badalyan *et al.*, 2011b):

Coprinellus curtus **(Kalchbr.) Vilgalys, Hopple & Jacq. Johnson**
Գոմաղբասունկ կարճլիկ

Գլխարկը՝ փակված՝ 6.0 x 4.0 մմ, բացված՝ 10-15 մմ տրամագծով, հատիկավոր փաթիլանման ծածկոցով, կաթնագույն, կենտրոնում դեղնադարչնագույն երանգով, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ գրեթե ամբողջովին ազատ, սպիտակավուն, ավելի ուշ՝ մոխրագույնից սև:

Ոտիկը՝ 30.0-60.0 x 0.5-1.0 մմ, սպիտակավուն, ծածկված նոսր մազիկներով:

Սպորները՝ 9.7-13.8 x 6.7-8.8 մկմ, էլիպսաձևից մինչև օվալ:

Աճում է գոմաղբի վրա փոքր խմբերով:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, քեչայանման, ավելի ուշ՝ տեղ-տեղ դեղնադարչնագույնից բաց ժանգագույն, դեպի եզրը՝ հատիկավոր ալրանման շրջաններով: Աճման միջին արագությունը՝ 4.2-4.7 մմ/օր: Առաջացնում է խմբերով պտղամարմիններ (Նկար 7a-c):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները կեղծ են կամ բացակայում են: Առկա են լավ զարգացած *Ozonium* տիպի միցելիում՝ անամորֆ, կանոնավոր հիֆային օղակներ, հիֆոցիստեր և կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 11e; 13b; 15A) (Badalyan *et al*., 2011b):

Խորքային կուլտուրայում միցելիումը առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ (Նկար 5e) (Badalyan *et al*., 2008):

Coprinellus disseminatus **(Pers.) J. E. Lange**
Գոմաղբասունկ ցրված

Գլխարկը՝ փակված՝ 7.0-8.0 մմ, բացված՝ 15.0-20.0 մմ տրամագծով, զանգականման, ճառագայթաձև ծալքերով, ալրոտ մակերեսով, սովորաբար՝ բաց դարչնագույն, դեղնադարչնագույն, կենտրոնում՝ օխրագույն, դեպի եզրերը՝ ավելի բաց, երբեմն՝ ամբողջովին սպիտակ, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ սերտաճած, նեղ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրագույնից սև:

Ոտիկը՝ 20.0-60.0 x 1.0-1.5 մմ, փխրուն, հեշտությամբ կոտրվող, ալ-

րոտ, հիմքի մոտ սպիտակից բաց մոխրագույն:
Սպորները՝ 6.6-9.7 x 4.1-5.8 մկմ օվալ, համարյա սև:
Աճում է կոճղերի, փայտային մնացորդների և մշակված փայտանյութի վրա խմբերով:
Ուտելի չէ:
Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, փարթամ, բամբականման, կենտրոնում՝ նոսր, ավելի ուշ՝ դեղնավուն, տեղ-տեղ ժանգադարչնագույն, եզրը՝ հավասար, ագարը՝ տեղ-տեղ մուգ դարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 5.6-5.8 մմ/օր:
Դիկարիոնային միցելիումն օժտված է կլորավուն, միակողմանի, ոչ հաճախադեպ, հիմնականում առանց անցքի ճարմանդներով (Նկար 19a): Առկա են լավ զարգացած անամորֆ՝ *Ozonium* տիպի ստերիլ միցելիում և բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ (Նկար 11a,b; 12a,d):
Մոնոսպորային գաղութները մորֆոլոգիայով առանձնապես չեն տարբերվում դիկարիոնային գաղութներից: Ճարմանդները բացակայում են, առկա են *Ozonium* տիպի միցելիում և բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ: Աճման միջին արագությունը՝ 4.5-5.2 մմ/օր (Badalyan *et al*., 2011b):
Խորքային կուլտուրայում դիկարիոնային միցելիումը առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ (Նկար 5h): Առկա են կանոնավոր հիֆային օղակներ (Badalyan *et al*., 2008):

Coprinellus domesticus **(Bolton) Vilgalys, Hopple & Jacq. Johnson**
Գոմաղբասունկ ընտանի

Գլխարկը՝ փակված՝ 40.0 x 35.0 մմ, գնդաձև, ձվաձև կամ էլիպսաձև, բացված՝ մինչև 70.0 մմ տրամագծով, կենտրոնում՝ բաց օխրագույն, կամ կեղտոտ ժանգագույն, եզրերում՝ ավելի բաց, պատված սպիտակավուն ծածկոցով, որը հետագայում մասնատվում է կրեմագույնից օխրագույն կամ մուգ դարչնագույն փաթիլների, ենթարկվում է ավտոլիզի:
Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ 40.0-100.0 x 4.0-10.0 մմ, սպիտակ, հիմքում՝ գուրզաձև, երբեմն՝ վուլվայանման եզրով, հաճախ՝ *Ozonium*-ի ժանգագույն միցելիումով:

Սպորները՝ 6.0-8.9 x 3.7-4.8 մկմ, օվալ կամ էլիպսաձև, կենտրոնում՝ կարմրադարչնագույն, արտակենտրոն ծլման ելուստով:

Աճում է ծառարմատների, կոճղերի, փայտային մնացորդների և մշակված փայտանյութի վրա խմբերով:

Ուտելի չէ:

Հայաստանում տարածված է Երևանի, Զանգեզուրի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, քեչայանման, ավելի ուշ՝ միցելիումը և ագարը դեղնավուն, տեղ-տեղ ժանգագույն: Աճման միջին արագությունը՝ 5.4-5.6 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ՝ ոտիկի հիմքում *Ozonium*-ի ժանգագույն միցելիումով (Նկար 7d-f):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են: Առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ, հիֆոցիստեր, ինչպես նաև ստերիլ միցելիում՝ *Ozonium* և սպորառաջացնող՝ *Hormographiella verticilliata* սինանամորֆներ (Նկար 12b; 13f; 15B; 16e,i; 17a,b; 20f; 23c,d) (Badalyan *et al*., 2011b):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ (Նկար 5g): Առկա են *H. verticilliata* ատիպիկ արթրոսպորներ (Badalyan *et al*., 2008):

Coprinellus ellisii **(P. D. Orton) Redhead, Vilgalys & Moncalvo**
Գոմաղբասունկ էլիզիի

Գլխարկը՝ փակված՝ 10.0-18.0 x 8.0-12.0 մմ, կոնաձև կամ էլիպսաձև, ավելի ուշ՝ վեր բարձրացող եզրերով, բաց կրեմագույնից մոխրագույն, կենտրոնում՝ մուգ, ծածկված մանր սպիտակավուն թեփուկներով, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, խիտ, սպիտակ, ավելի ուշ՝ մուգ շագանակագույն, համարյա սև:

Ոտիկը՝ 25.0-35.0 x 1.0-2.5 մմ, սպիտակ, մասամբ փոշոտ, ապա՝ հարթ, հիմքում՝ հաստացած:

Սպորները՝ 6.0-8.0 x 3.6-4.3 մկմ, էլիպսաձև, հարթ, կարմրադարչնագույն:

Աճում է հողում թաղված փտող բնափայտի վրա:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ խիտ, բամբականման, սկզբում՝ սպիտակ, ավելի ուշ՝ բաց դեղնավունից մուգ նարնջագույն (նկ. 2a): Աճման միջին արագությունը՝ 6.4 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պտղամարմիններ (Նկար 7g):

Դիկարիոնային միցելիումի ճարմանղները բացակայում են կամ կեղծ են: Առկա են *Hormographiella* արթրոսպորներ և ստերիլ միցելիում՝ *Ozonium* սինանամորֆներ, քլամիդոսպորներ, եզակի ալոցիստեր՝ կուտակող բջիջներ, կանոնավոր հիֆային օղակներ, ինչպես նաև կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 11c; 14a-d; 15C; 17d) (Badalyan *et al*., 2011b):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ (Նկար 5i): Առկա են *Hormographiella* տիպի արթրոսպորներ (Badalyan *et al*., 2008):

Coprinellus flocculosus **(DC.) Vilgalys, Hopple & Johnson**
Գոմաղբասունկ փափկամազ

Գլխարկը՝ փակված՝ 25.0 x 20.0 մմ, կլորավուն, ձվաձև կամ էլիպսաձև, ապա՝ կոնաձև կամ ուռուցիկ, մինչև 45.0 մմ տրամագծով, բաց օխրագույն կամ օխրադարչնագույն՝ օխրամոխրագույն կենտրոնով, սկզբում՝ քեչայանման ծածկոցով, ավելի ուշ՝ մանր օխրադարչնագույն փաթիլներով, ենթարկվում է ավտոլիզի (Նկար 1a):

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սկզբում՝ սպիտակ, հետագայում՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ 30.0-80.0 x 2.0-7.0 մմ, սպիտակ, հիմքում՝ գուրզաձև, երբեմն՝ վոլվայանման մնացորդներով:

Սպորները՝ 9.8-16.7 x 6.4-9.8 մկմ, հարթ, էլիպսաձև կամ ձվաձև, շատ մուգ կարմրադարչնագույն, արտակենտրոն ծլման ելուստով:

Աճում է մեկական, ցրված՝ տաշեղների և այլ փայտանյութերի վրա:

Ուտելի չէ:

Հայաստանում առաջին անգամ նկարագրվել է Երևանի տարածքում (Badalyan *et al*, 2011b) (Նկար 1a):

Գաղութը՝ բամբականման, սպիտակ, աճը՝ ճառագայթաձև, ավելի ուշ՝ տեղ-տեղ թույլ դեղնաժանգագույն, կենտրոնում՝ ավելի նոսր, սուբստրատին սեղմված, ագարը՝ թույլ դեղնավուն (Նկար 1d)։ Աճման միջին արագությունը՝ 4.7-5.0 մմ/օր։ Կուլտուրայում առաջացնում է պրիմորդիումներ։

Դիկարիոնային միցելիումի հիֆային ճարմանդները կեղծ են կամ բացակայում են։ Առկա են *Ozonium* միցելիումի սեպտավորված հիֆային ձգոններ, կանոնավոր և անկանոն հիֆային օղակներ, ալոցիստեր և հիֆոցիստեր (Նկար 13a,c,e,g) (Badalyan *et al*., 2011b)։

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով, մազմզոտ պելետներ (Նկար 5l)։

***Coprinellus micaceus* (Bull.) Vilgalys, Hopple & Jacq. Johnson**
Գոմաղբասունկ շողացող

Գլխարկը՝ փակված՝ 35.0 x 30.0 մմ, ձվաձև, էլիպսաձև, բացված՝ կոնաձև, ուռուցիկ, մինչև 50.0 մմ տրամագծով, մուգ օխրագույն կամ ժանգագույն, կենտրոնում՝ ավելի մուգ, ծածկված վաղ անհետացող սպիտակավուն փաթիլներով, ենթարկվում է ավտոլիզի։

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև։

Ոտիկը՝ 30.0-100.0 x 2.0-6.0 մմ, սպիտակ, հիմքում՝ գուրզաձև, հաճախ՝ վոլվայանման եզրով։

Սպորները՝ 6.8-10.2 x 5.0-6.7 x 4.3-5.5 մկմ, անհավասարակող, էլիպսաձև կամ ձվաձև, կարմրադարչնագույն, կենտրոնային ծլման ելուստով։

Աճում է ծառերի հիմքերի մոտ՝ քայքայված բնափայտի վրա, մեծ խմբերով։

Ուտելի է երիտասարդ ժամանակ։

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Արագածի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008)։

Գաղութը՝ սպիտակ, խավոտ, բամբականման, ճառագայթաձև աճող, եզրը՝ հավասար, ավելի ուշ՝ կենտրոնում սեղմված, ագարը՝ մուգ կարմրադարչնագույն (Նկար 3e)։ Աճման միջին արագությունը՝ 4.3-5.3 մմ/օր։ Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ (Նկար 7h,i)։

Դիկարիոնային միցելիումն օժտված է ոչ հաճախադեպ, միակողմանի, կլորավուն ճարմանդներով: Առկա են *Ozonium* տիպի միցելիում, քլամիդոսպորներ, տեսակին բնորոշ հիֆերի եռակի ճյուղավորում, կանոնավոր հիֆային օղակներ և հիֆոցիստեր (Նկար 13d; 15D; 25j; 26d) (Badalyan *et al*., 2011b):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ (Նկար 5f) (Badalyan *et al*., 2008):

Coprinellus radians **(Desm.) Vilgalys, Hopple & Jacq. Johnson**
Գոմաղբասունկ ճառագայթափայլ

Գլխարկը՝ փակված՝ 30.0 x 25.0 մմ, կլորավուն, ձվաձև կամ էլիպսաձև, բացված՝ կոնաձև, ուռուցիկ, մինչև 50.0 մմ տրամագծով, պատված սպիտակավուն քեչայանման ծածկոցով, որը մասնատվում է մանր, սպիտակավուն, կրեմագույն փաթիլների, կենտրոնում՝ դեղինից կարմրանարնջագույն, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ 30.0-80.0 x 2.0-7.0 մմ, սնամեջ, փխրուն, սպիտակ, հիմքում՝ գուրզաձև, երբեմն՝ վոլվայանման եզրով, հիմքով հաճախ ամրացած *Ozonium*-ի ժանգագույն միցելիումին:

Սպորները՝ 8.5-11.5 x 5.5-7.0 մկմ, գլանաձև, էլիպսաձև, մուգ կարմրադարչնագույն, արտակենտրոն ծլման ելուստով:

Աճում է փտող բնափայտի վրա մեկական կամ փոքր խմբերով, խոնավ վայրերում՝ լոգարաններում կամ մառաններում, որտեղ կարող է հանդիպել միայն *Ozonium*-ի ժանգագույն միցելիումի տեսքով:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, փարթամ, ճառագայթաձև աճով, ավելի ուշ՝ կենտրոնից դեղնող, մուգ դեղին, դարչնաժանգագույն, ագարը՝ դեղնավուն, եզրը՝ բարձրացող, սպիտակ, նոսր: Աճման միջին արագությունը՝ 4.7 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Առկա են տեսակին բնորոշ, զարգացման տարբեր փուլերում գտնվող ալոցիստեր՝ կուտակող բջիջներ, հիֆային օղակներ, հիֆոցիստեր և կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 20g): Լավ զարգացած է *Ozo-*

nium տիպի անամորֆ միցելիումը՝ սեպտավորված զուգահեռ հիֆերի ծգոնների տեսքով (Նկար 11d; 14e-g; 15E-G; 18c; 23e): *Hormographiella* տիպի արթրոսպորները եզակի են (Badalyan *et al*., 2011b):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ (Badalyan *et al*., 2008):

***Coprinellus* aff. *radians* I (շտամներ 1-2PS, 1-1C)**

Հայաստանում առաջին անգամ հայտնաբերվել է Շիրակի ֆլորիստական շրջանում՝ մշակված փայտանյութի վրա (Badalyan *et al.,* 2011a): Պտղամարմինների արագ ավտոլիզի պատճառով դրանց նկարագրությունը չի բերվում:

Գաղութը՝ սպիտակ, փարթամ, ճառագայթաձև աճով, ավելի ուշ՝ կենտրոնում մուգ կիտրոնադեղնավուն, ագարը՝ դեղնավուն (Նկար 2b): Աճման միջին արագությունը՝ 5.4-6.4 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են (Նկար 10a-e): Առկա են զարգացման տարբեր փուլերում գտնվող ալոցիստեր կամ կուտակող բջիջներ, կանոնավոր հիֆային օղակներ, միցելիալ հիֆոցիստեր և քլամիդոսպորներ (Նկար 10f-v): Լավ զարգացած է *Ozonium* ստերիլ միցելիալ անամորֆը (Badalyan *et al*., 2011a):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով, մազմզոտ պելետներ (Նկար 5k) (Badalyan *et al*., 2008):

***Coprinellus* aff. *radians* II (շտամ C35)**

Գաղութը՝ սկզբում սպիտակ, ավելի ուշ՝ դեղին, մուգ նարնջագույն, խիտ բամբականման: Աճման միջին արագությունը՝ 6.3 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ (Նկար 7j,k):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Առկա են սպորառաջացնող՝ *Hormographiella* և ստերիլ՝ *Ozonium* տիպերի սինանամորֆներ, ինչպես նաև բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ (Նկար 16a,d; 17c) (Badalyan *et al,* 2011b):

Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, հարթ պելետներ (Badalyan *et al*., 2008): Առկա են *Hormographiella* ատիպիկ արթրոսպորներ:

Coprinellus aff. *radians* III (շտամ Cb_1)

Գաղութը՝ սպիտակ, փարթամ, ավելի ուշ՝ մուգ դեղին, դեղնանարնջագույն, բամբակաքեչայանման, կոնցենտրիկ շրջաններով: Աճման միջին արագությունը՝ 6.4 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պտղամարմիններ (Նկար 6e):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են: Առկա են կանոնավոր բարդ հիֆային օղակներ, լավ զարգացած սինանամորֆներ՝ ստերիլ՝ *Ozonium* և սպորառաջացնող՝ *Hormographiella* տիպերով (Նկար 11f; 16b,c,f,j; 17g) (Kües *et al*., 2016):

Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, հարթ պելետներ (Badalyan *et al*., 2008): Առկա են *Hormographiella* ատիպիկ արթրոսպորներ:

Coprinellus xanthothrix (Romagn.) Vilgalys, Hopple & Jacq. Johnson
Գոմաղբասունկ ոսկեդեղին, ոսկեմազիկ

Գլխարկը՝ փակված՝ 40.0 x 35.0 մմ, կլորավուն, ձվաձև, էլիպսաձև, բացված՝ կոնաձև, ուռուցիկ 70.0 մմ տրամագծով, քեչայանման սպիտակավուն ծածկոցով, որը կենտրոնում դժգույն օխրաժանգագույն է, եզրերում՝ ավելի բաց, հետագայում՝ մասնատված փոքր փաթիլների, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ սնամեջ, 40.0-100.0 x 4.0-10.0 մմ, սպիտակ, հիմքում փքված, երբեմն՝ վոլվայանման եզրով, հաճախ՝ *Ozonium*-ի ժանգագույն միցելիումով:

Սպորները՝ 6.7-9.9 x 4.4-6.3 x 4.9-5.1 մկմ, ձվաձև, էլիպսաձև, կարմրադարչնագույն, արտակենտրոն ծլման ելուստով:

Աճում է լայնատերև ծառերի կոճղերի, փտած արմատների վրա կամ դրանց շրջակայքում խմբերով:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ բամբակաքեչայանման, սպիտակ, նոսր, տեղ-տեղ գրեթե թափանցիկ, դեղնավուն, դեղնանարնջագույն, ավելի ուշ՝ բաց դարչնագույն երանգով, եզրը՝ անկանոն, ագարը՝ բաց շագանակագույն: Աճման միջին արագությունը՝ 5.3-6.5 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ (Նկար 6g; 7l,m):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ և ապիկալ փքումներ, լիմոնաձև քլամիդոսպորներ (Նկար 12c; 20a, b, 23f): Սինանամորֆները ներկայացված են ստերիլ՝ *Ozonium* և սպորառաջացնող՝ *Hormographiella* տիպերով (Նկար 15H, 17e) (Badalyan *et al,* 2011b):

Մոնոկարիոնային գաղութները մորֆոլոգիայով առանձնապես չեն տարբերվում դիկարիոնային գաղութներից: Աճման միջին արագությունը՝ 5.0-6.2 մմ/օր: Առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ, կլոր և օվալաձև դեղնավուն քլամիդոսպորներ: Սինանամորֆը ներկայացված է ստերիլ՝ *Ozonium* և սպորառաջացնող՝ *Hormographiella* տիպերով:

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ (Նկար 5j): Առկա են *Hormographiella* ատիպիկ արթրոսպորներ (Badalyan *et al*., 2008):

***Coprinopsis atramentaria* (Bull.) Redhead, Vilgalys & Moncalvo**
Գոմաղբասունկ թանաքամոխրագույն

Գլխարկը՝ փակված՝ 40.0-8.0 x 30.0-60.0 մմ, կլորավուն, էլիպսաձև, ձվաձև, բացված՝ զանգականման կամ կոնաձև, մինչև 100.0 մմ տրամագծով, մոխրագույն կամ մոխրադարչնագույն, կենտրոնում՝ սեղմված թեփուկներով, համարյա հարթ, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ 70.0-150.0 x 8.0-15.0 մմ, սնամեջ, սպիտակ, հիմքում՝ ուռուցիկ, հաճախ՝ վոլվայանման եզրով:

Սպորները՝ 6.4-10.6 x 4.2-6.3 մկմ, էլիպսաձև կամ ձվաձև, մուգ կարմրադարչնագույն, կենտրոնային ծլման ելուստով:

Աճում է ծառերի հիմքերի մոտ, անտառեզրերում, դաշտերում, այգիներում ու պուրակներում խմբերով:

Ուտելի է երիտասարդ ժամանակ, սակայն ալկոհոլի ազդեցությամբ առաջացնում է վտանգավոր թունավորում՝ կոպրինային սինդրոմ (Bresinsky, Basl, 1990):

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, բամբակաքեչայանման, նոսր, ավելի ուշ՝ կենտրոնում դեղնավուն, ագարը՝ անփոփոխ: Աճման միջին արագությունը՝ 2.5-3.5 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված են՝ օժտված հաճախակադեպ, փոքր, կլորավուն, հիմնականում առանց անցքի, միակողմանի ճարմանդներով:

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է հարթ մակերեսով պելետներ (Նկար 5c):

Coprinopsis cinerea **(Schaeff.) Redhead, Vilgalys & Moncalvo**
Գոմաղբասունկ մոխրագույն

Գլխարկը՝ փակված՝ 20.0-15.0 մմ, էլիպսաձև, գլանաէլիպսաձև, բացված՝ մինչև 30.0 մմ տրամագծով, կոնաձև, ուռուցիկ կամ տափակ, մոխրադարչնագույն, պատված սպիտակավունից արծաթամոխրագույն ծածկոցով, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, նեղ, խիտ, սպիտակ, ավելի ուշ՝ մոխրադարչնագույնից սև:

Ոտիկը՝ 50.0-100.0 x 2.0-6.0 մմ, սնամեջ, թելիկավոր, սպիտակավուն, ուղիղ կամ հիմքում հաստացող (մինչև 9 մմ):

Սպորները՝ 8.4-11.8 x 5.8-78.8 մկմ, էլիպսաձև, ձվաձև, հազվադեպ գլանաձև, մուգ կարմրադարչնագույն, կենտրոնային ծլման ելուստով:

Աճում է գոմաղբի, ինչպես նաև քայքայվող բնափայտի վրա:

Ուտելի չէ:

Հայաստանում տարածված է Երևանի, Իջևանի և Սևանի ֆլորիստական շրջաններում (Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, խավոտ, բամբակազամշանման, ավելի ուշ՝ կրեմագույն, միցելիումը և ագարը՝ բաց դարչնագույն (Նկար 2c): Աճման միջին արագությունը՝ 4.1-5.1 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է տեսակին բնորոշ կլոր, դարչնագույն սկլերոցիումներ, պրիմորդիումներ և հասուն պտղամարմիններ (Նկար 6i):

Դիկարիոնային միցելիումի հիֆերն օժտված են փոքր, առանց անցքի, կլորավուն, ձգված, հաճախադեպ ճարմանդներով (Նկար 19d): Առկա են եզակի պարզ հիֆային օղակներ, սպորառաջացնող անամորֆ՝ *Hormographiella aspergillata*, քլամիդոսպորներ, կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 16g, 17f): Մոնոկարիոնային միցելիումը նույնպես առաջացնում է քլամիդոսպորներ և *H. aspergillata* տիպի սպորատվություն (Badalyan *et al*., 2011b; Kües *et al*., 2016):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է փխրուն, հարթ պելետներ (Նկար 5d): Առկա են *H. aspergillata* արթրոսպորներ (Badalyan *et al*., 2008):

Coprinopsis cothurnata **(Godey) Redhead, Vilgalys & Moncalvo**
Գոմաղբասունկ փոշոտ

Գլխարկը՝ փակված՝ 20.0 x 13.0 մմ, կլորավուն, էլիպսաձև, գլանաէլիպսաձև, ամբողջովին պատված սպիտակ փոշենման ծածկոցով, բացված՝ մինչև 35.0 մմ տրամագծով, կոնաձև կամ ուռուցիկ, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ կամ սերտաճած, խիտ, սպիտակ, հետագայում՝ մոխրագույնից սև:

Ոտիկը՝ մինչև 100.0 x 3.0-5.0 մմ, վերևում՝ ավելի բարակ, սպիտակ, փաթիլներով, հիմքում՝ մինչև 6 մմ, սպիտակ, դարչնագույն փաթիլներով:

Սպորները՝ 9.6-15.4 x 6.5-8.7 x 7.0-7.5 մկմ, քիչ թե շատ վեցանկյուն, մուգ կարմրադարչնագույն, կենտրոնային կամ թույլ ապակենտրոն ծլման ելուստով:

Աճում է գոմաղբի վրա առանձին կամ խմբերով:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, բրդաքեչայանման, ագարը՝ անգույն: Աճման միջին արագությունը՝ 3.3 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Զուգահեռ հիֆերը միացած են բազմաթիվ անաստոմոզներով՝ առաջացնելով հիֆային ծգոններ: Հիմնականում առկա են պարզ, հազվադեպ՝ բարդ հիֆային օղակներ: Անամորֆը առատորեն ներկայացված է ատիպիկ քլամիդոսպորանման բլաստիկ փքումներով (Նկար 20d) (Kües *et al*., 2016):

Coprinopsis strossmayeri **(Schulzer) Redhead, Vilgalys & Moncalvo**
Գոմաղբասունկ բարդու

Գլխարկը՝ փակված՝ 40.0 x 25.0 մմ, ձվաձև, էլիպսաձև, լայն գլանաձև, բացված՝ 45.0 x 60.0 մմ, կոնաձև, զանգականման, մոխրաօխրագույն կամ գորշագույն, կենտրոնում՝ կեղտոտ դեղին, եզրերում՝ ավելի բաց, ամբողջովին պատված սպիտակ ծածկոցով, որը մասնատվում է սպիտակ կամ կրեմագույն լաթերի (Նկար 1b):

Հիմենաֆորի թիթեղները՝ խիտ, ազատ, սպիտակ, մոխրագույնից մուգ դարչնագույն, սև:

Ոտիկը՝ մինչև 120.0 x 4.0-10 մմ, սնամեջ, գլանաձև, թելիկավոր, սպիտակավուն, հիմքում՝ թեթևակի լայնացած, միցելիումի մնացորդներով: Առաջացնում է նարնջադարչնագույնից մուգ դարչնագույն, տրյուֆելների կամ բորբոսի հոտով ռիզոմորֆներ:

Սպորները՝ 6.9-8-9 x 4.7-6.0 x 4.5-5.2 մկմ, ձվաձև, էլիպսաձև, մուգ կարմրադարչնագույն, կենտրոնային ծլման ելուստով:

Պտղամարմինը նման է *Coprinopsis atramentaria* պտղամարմնին:

Աճում է բնափայտի մնացորդներով հարուստ հողերում, քայքայվող բնափայտի վրա, քաղաքային այգիներում, անտառներում խմբերով:

Ուտելի չէ:

Աշխարհում ունի սահմանափակ տարածվածություն:

Հայաստանում առաջին անգամ նկարագրվել է Երևանի տարածքում, բարդու ու թեղու բների մոտ (Badalyan *et al*, 2011a) (Նկար 1b):

Գաղութը՝ սպիտակ, մետաքսանման՝ լավ արտահայտված միցելիալ ձգոններով, ավելի ուշ՝ բաց, իսկ կենտրոնում՝ մուգ կրեմագույն, ագարը՝ բաց դեղնավուն (Նկար 1e; 8a,b): Աճման միջին արագությունը՝ 5.3-7.2 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է կրեմագույն պրիմորդիումներ (Նկար 8c):

Դիկարիոնային հիֆերը ինտենսիվ վակուոլացված են, օժտված միակողմանի, հաճախադեպ, կլոր, աղեղնաձև, անցքով ճարմանդներով (Նկար 9a,b, e-l; 19c): Առկա են պարզ հիֆային օղակներ, քլամիդոսպորներ և կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 9c,d,m; 20i) (Badalyan *et al*., 2011a):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով, հարթ պելետներ (Նկար 5b) (Badalyan *et al*., 2008):

Coprinus comatus **(O. F. Müll.) Pers.**
Գոմաղբասունկ սպիտակ

Գլխարկը՝ 5.0-15.0 սմ տրամագծով, սկզբում՝ ձվաձև, էլիպսաձև, ավելի ուշ՝ զանգականման, մսոտ, սպիտակ, պատված խոշոր թեփուկներով, ենթարկվում է ավտոլիզի:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, լայն, խիտ, սպիտակ, ավելի ուշ՝

վարդագույնից սև:

Ոտիկը՝ 20.0 x 2.0 սմ, հիմքում՝ հաստացող, սնամեջ, սպիտակ, շարժուն օղակով:

Սպորները՝11.0-15.0 x 6.0-8.0 մկմ, էլիպսաձև, սև:

Աճում է պարարտ հողերում՝ քայքայվող բնափայտի վրա, անտառային բացատներում, մարգագետիններում, ճանապարհների եզրին, այգիներում:

Ուտելի է երիտասարդ ժամանակ: Դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի, Իջևանի, Սևանի, Զանգեզուրի և Լոռու ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, խավոտ, նոսր, բամբականման, հավասար եզրով, ագարը՝ կենտրոնում կարմրադարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 3.7-4.0 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումն օժտված է կլորավուն, միակողմանի, հաճախադեպ, հիմնականում առանց անցքի ճարմանղներով (Նկար 18a; 19b): Առաջացնում է պարզ հիֆային օղակներ, նեմատոդ որսացող՝ անհարթ մակերեսով կլոր գլխիկներ ունեցող ճյուղավորված կառուցվածքներ, եզակի քլամիդոսպորներ, մոնոկարիոնային միցելիումը՝ նաև օիդիումներ, կալցիումի օքսալատի բյուրեղներ (Նկար 22a,b; 24a,c; 25i; 26b) (Badalyan *et al*., 2011b; Kües *et al*., 2016):

Խորքային կուլտուրայում միցելիումը առաջացնում է փխրուն, հարթ պելետներ (Նկար 5a) (Badalyan *et al*., 2008):

***Daedalea quercina* (L.) Pers.**
Կաղնու սպունգ

Պտղամարմինները՝ բազմամյա, խցանային, կիսաշրջանաձև, անհարթ, երբեմն՝ կոնցենտրիկ ակոսավոր մակերեսով, կրեմադեղնագույն, դժգույն օխրադարչնագույն, բաց մոխրագույն:

Հիմենաֆորը կազմված է սպիտակ փառով պատված հաստ միջնապատերով երկարավուն ծակոտիներից կամ լաբիրինթանման թիթեղներից:

Սպորները՝ 6.0-7.0 x 2.5 – 3.75 մկմ, էլիպսաձև, մի կողմից սեղմված, հիմքում՝ թեք սրացող, անգույն (Бондарцев, 1953):

Առաջացնում է բնափայտի գորշ փտում:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված է ֆլորիստական բոլոր շրջաններում՝ կաղնու, հաճարենու, բոխու և լայնատերև այլ ծառատեսակների բնե-րի ու կոճղերի վրա (Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բրդաքեչայանման, կոնցենտրիկ խիտ շրջաննե-րով, թույլ ծալքավոր, եզրը՝ հավասար, ագարը դեղնավուն: Աճման մի-ջին արագությունը՝ 4.8 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է հասուն, ձևավորված պտղամարմիններ:

Դիկարիոնային հիֆերը վակուոլացված են, ճարմանդները միակող-մանի, հաճախադեպ, հսկա, փոքր, կլորավուն (Նկար 25k): Առկա են հի-ֆային օղակներ, լիմոնաձև քլամիդոսպորներ և ուռանիստ բյուրեղներ:

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ (Նկար 4b): Առկա են բազմաթիվ ապիկալ և ինտերկա-լար լիմոնաձև քլամիդոսպորներ (Badalyan, Sakeyan, 2007):

***Flammulina velutipes* (Curtis) Singer**
Կոճղասունկ ձմեռային, թավշյա ոտիկ

Գլխարկը՝ 3.0-8.0 սմ տրամագծով, կլորավուն, ուռուցիկ, դեղնավուն, ժանգագույն, հարթ, լորձոտ մակերեսով:

Հիմենաֆորի թիթեղները՝ սերտաճած, լայն, նոսր, բաց դեղնավուն:

Ոտիկը՝ 7.0-8.0 x 0.5 սմ, գլանաձև, ամուր, թավշյա, վերևում՝ դեղնա-վուն, դեպի հիմքը՝ դարչնագույնից սև:

Սպորները՝ 7.0-8.0 x 5.0 մկմ, էլիպսաձև, անգույն:

Աճում է կենդանի կամ ընկած սաղարթավոր ծառերի կամ կոճղերի վրա խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Լայնորեն կուլտիվացվող հայտնի ուտելի դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Լոռու և Իջևա-նի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, ալրափոշենման, ավելի ուշ՝ կենտրոնից դեղնող, դեղնադարչնագույն, եզրը՝ թույլ արտահայտված, ագարը՝ տեղ-տեղ մուգ շագանակագույն (Նկար 3f): Աճման միջին արագությունը՝ 5.5-7.0 մմ/օր:

Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ (Նկար 6h):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, հաճախադեպ, մանր, կլորավուն: Առկա են բազմաթիվ էլիպսաձև քլամիդոսպորներ (7.2-8.0 x 11.2-14.4 մկմ), գլանաձև արթրոսպորներ, հիֆային օղակներ և ծողիկանման բյուրեղներ (Badalyan, Sakeyan, 2005; Badalyan *et al.*, 2006):

Fomes fomentarius **(L.) Fr.**
Աբեթասունկ իսկական

Պտղամարմինը՝ բազմամյա, կարծր, սմբակաձև, մակերեսը՝ կոնցենտրիկ ակոսավորված, պատված մինչև 2.0 մմ հաստության բաց մոխրագույնից սև, հազվադեպ՝ դեղնավուն կեղևով:

Հիմենաֆորը խողովակավոր՝ կլորավուն ծակոտիներով, բաց մոխրագույն կամ փայտագույն, սեղմելուց մգանում է:

Սպորները՝ 14.0-18.0-24.0 x 5.0-6.0-8.0 մկմ, անգույն, երկարավուն, էլիպսաձև, երբեմն՝ միակողմանի տափակ, սպորային փոշին՝ դեղնավուն (Бондарцев, 1953):

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ոչ ուտելի հայտնի դեղասունկ է:

Հայաստանում տարածված է բոլոր ֆլորիստական շրջաններում՝ կաղնու, հաճարի, բոխու, հացենու և այլ ծառատեսակների բների, ընկած ճյուղերի ու կոճղերի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բամբականման, եզրը՝ վատ արտահայտված, կենտրոնում՝ սեղմված, ավելի ուշ՝ կրեմադարչնագույն, բրդաբամբակազամշանման, զամշակաշվենման, ագարը՝ դեղնադարչնագույնից մուգ դարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 5.6-7.5 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է հասուն, ձևավորված պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումն օժտված է կլորավուն կամ աղեղնաձև, հիմնականում առանց անցքի, միակողմանի ճարմանդներով (Նկար 25h; 27a): Առկա են հիֆային հանգույցներ, կանոնավոր հիֆային օղակներ, ապիկալ հիֆային փքումներ, ծողիկաձև, քառանիստ և ութանիստ բյուրեղներ (Նկար 27e,f,p): Անամորֆը ներկայացված է կլորավուն ինտերկալար քլամիդոսպորներով (7.1-8.2 x 7.4-8.8 մկմ), գլանաձև (3.6-3.7 x

20.9-22.1 մկմ) և թալիկ (2.6-3.3 x 5.1-8.1 մկմ) արթրոսպորներով (Նկար 27i,j) (Badalyan *et al.,* 2015): Ծերացող կուլտուրայում առկա են կլորավուն, հաստապատ կուտիկուլային բջիջներ:

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է սնամեջ, հարթ մակերեսով պելետներ (Նկար 4a): Հիֆերը վակուոլացված են: Առկա են արթրոսպորներ, հսկա, գլանաձև (8.2-14.6 x 14.2-35.6 մկմ) և կլորավուն կուտիկուլային բջիջներ (Badalyan *et al.,* 2007):

Fomitopsis pinicola **(Sw.) P. Karst**.
Աբեթասունկ եզրազարդված

Պտղամարմինը՝ բազմամյա, նստադիր, բարձիկանման, սմբակաձև, մակերեսը՝ ակոսավոր, պատված դեղին, ժանգագույն, կարմրավուն, գոտիական փայլուն կեղևով, հիմքի մոտ՝ համարյա սև: Եզրը՝ սուր կամ բթացած, կլորավուն, սկզբում՝ դժգույն, ապա՝ մգացող, փայտախցանային, կոտրելիս՝ կրեմագույն կամ գորշավուն՝ ժանգագույն երանգով:

Հիմենաֆորի խողովակների միջնապատերը՝ հաստ, պատված սպիտակ փառով, ծակոտիները՝ կլորավուն, բութ եզրերով, մակերեսը՝ կրեմագույն, սեղմելիս՝ մգանում է:

Սպորները՝ 6.0-8.0 x 3.5-4.0 մկմ, ձվաձև, էլիպսաձև, հիմքում՝ ելուստով, խոշոր կաթիլով:

Առաջացնում է բնափայտի գորշ և սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ:

Օժտված է դեղաբանական հատկություններով:

Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում կաղնու, հաճարենու և չինարի կոճղերի կամ ընկած բնափայտի վրա (Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բրդաբամբականման, ավելի ուշ՝ բրդաքեչայանման, եզրը՝ սեղմված, ագարը՝ անգույն: Աճման միջին արագությունը՝ 4.6-6.3 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պրիմորդիումներ և ձևավորված, հասուն պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված են, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, փոքր՝ կլորավուն կամ հսկա՝ աղեղնաձև (Նկար 27b,c): Առկա են բազմաթիվ օվալաձև քլամիդոսպորներ (6.1-9.1 x 8.7-15.9 մկմ), գլանաձև արթրոսպորներ՝ օիդիումներ (3.8-

5.3 x 26.4-34.9 մկմ), ծողիկածև և քառանիստ բյուրեղներ (Նկար 21a; 27k,m,q) (Badalyan *et al.,* 2015):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ (Նկար 4c): Առկա են քլամիդոսպորներ:

Ganoderma adspersum **(Schulzer) Donk**
Աբեթասունկ հարավային, եվրոպական

Պտղամարմինը՝ բազմամյա, բութ եզրով, երկարությունը՝ 7.0-60.0 սմ, լայնությունը՝ 5.0-25.0 սմ, հաստությունը՝ 3.0-30.0 սմ, վերին մակերեսը՝ մուգ շագանակագույն, անհարթ կեղևով, պատված դարչնագույն սպորային փոշով (Նկար 1c):

Հիմենաֆորի խողովակները՝ դարչնագույն, կլորավուն, սպիտակից բաց դեղնաօխրագույն:

Սպորները՝ 8.0-13.0 x 5.5-9.0 մկմ, դարչնագույն, օվալ, գագաթում՝ կտրված:

Հիմնականում հանդիպում է լայնատերև ծառատեսակների բների հիմքում (Phillips, 1981):

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ:

Հայաստանում առաջին անգամ նկարագրվել է 2012 թ. Երևանի տարածքում՝ հացենու, կաղնու, թթենու և ակացիայի վրա (Badalyan *et al*., 2012): Հետագայում հայտնաբերվել է նաև Ապարանի և Իջևանի ֆլորիստական շրջաններում՝ հացենու, հաճարենու, կաղնու և լայնատերև այլ ծառերի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2017, այս գիրքը) (Նկար 1c):

Գաղութը՝ սպիտակ, բամբակաքեչայանման, ավելի ուշ՝ զամշակաշվենման, կրեմադեղնավուն, եզրը՝ սեղմված, հավասար, ագարը՝ դեղնավուն, տեղ-տեղ՝ բաց դարչնագույն, կենտրոնում՝ ճաքճքած (Նկար 1f): Աճման միջին արագությունը՝ 4.9-6.0 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված են, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, փոքր, կլոր, անցքով և առանց անցքի: Ծերացող կուլտուրայում առկա են կլորավուն, հիալինային կուտիկուլային բջիջներ կամ քլամիդոսպորանման փքումներ (4.4-5.3 x 6.0-9.8 մկմ), քառանիստ բյուրեղներ (Նկար 21f; 27s) (Badalyan *et al.,* 2015; Badalyan, Kües, 2015):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է մանր, խիտ միջուկով, հիմնականում հարթ, կաշվենման պելետներ (Նկար 4h): Առկա են վակուոլացված հիֆեր, ապիկալ փքումներ և քլամիդոսպորներ:

Ganoderma applanatum* (Pers.) Pat. *(=Ganoderma lipsiense)
Աբեթասունկ տափակ

Պտղամարմինը՝ բազմամյա, երկարությունը՝ 10.0-60.0 սմ, լայնությունը՝ 5.0-30 սմ, հաստությունը՝ 2.0-8.0 սմ, անհարթ, ալիքաձև, ակոսավոր մակերեսով՝ դժգույն, մոխրագույն կամ շագանակագույն:

Հիմենաֆորը՝ խողովակավոր, դարչնագույն, ծակոտիները՝ կլորավուն՝ սպիտակից մինչև դարչնագույն, սեղմելիս մգանում է:

Սպորները՝ 6.5-8.5 x 4.5-6.0 մկմ, էլիպսաձև, գագաթում՝ կտրված, դարչնագույն՝ հաճախ կաթիլով (Phillips, 1981):

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ:

Հայաստանում հանդիպում է ֆլորիստական բոլոր շրջաններում՝ կաղնու, հաճարենու, բոխու, հացենու, ուռենու և լայնատերև այլ ծառատեսակների բների ու կոճղերի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, տեղ-տեղ թափանցիկ, բամբակաալրափոշենման, ավելի ուշ՝ ծիթապտղադարչնագույն, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ տեղ-տեղ դարչնագույն (Նկար 2d): Աճման միջին արագությունը՝ 3.5-6.0 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված են, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, կլոր՝ անցքով և առանց անցքի: Առկա են կանոնավոր հիֆային օղակներ, հազվադեպ՝ քառանիստ բյուրեղներ (Նկար 27t) (Badalyan *et al*., 2015):

Խորքային կուլտուրայում առաջացնում է թույլ մազմզոտ կամ հարթ, կաշվենման պելետներ (Նկար 4g):

***Ganoderma lucidum* (Curtis) P. Karst.**
Աբեթասունկ լաքապատ

Պտղամարմինը՝ կլորավուն, հովհարաձև կամ բողբոջանման, թույլ ակոսավոր, կազմված կնճռոտ գլխարկից և կողքային, երբեմն՝ ուղղահայաց, հազվադեպ՝ կենտրոնային ոտիկից՝ պատված շիկակարմրավուն, ապա՝ մուգ կարմիր կամ կարմրաշագանակագույն, փայլուն, լաքապատ կեղևով:

Հիմենաֆորի խողովակները՝ երկարավուն, ծակոտիները՝ կլորավուն, մանր, սկզբում՝ սպիտակավուն, կրեմագույն, այնուհետև՝ շագանակագույն:

Սպորները՝ 8.0-13.0 x 6.0-7.5 մկմ, ձվաձև, օվալ, գագաթում կտրված, գորտնուկավոր, դեղնագորշավուն, կաթիլով (Бондарцев, 1953):

Աճում է լայնատերև ծառատեսակների՝ կաղնու, հաճարենու, շագանակենու, հացենու, թխկու կոճղերի, երբեմն՝ փշատերևայինների՝ եղևնու վրա:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ:

Շատ հայտնի և լայնորեն կուլտիվացվող դեղասունկ է:

Հայաստանում հանդիպում է Ապարանի, Լոռու, Իջևանի, Սևանի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բրդաբամբականման, կենտրոնում՝ ավելի խիտ, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ տեղ-տեղ բաց կամ մուգ դարչնագույն (Նկար 2e): Աճման միջին արագությունը՝ 4.8-6.1 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ (Նկար 6c):

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված են, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, կլորավուն՝ անցքով կամ առանց անցքի (Նկար 27d): Առկա են հիֆային օղակներ, ապիկալ հիֆային փքումներ, կլոր, հաստապատ, դարչնագույն կուտիկուլային բջիջներ,ականտոցիտանման կառուցվածքներ (Նկար 21g; 27g,h): Բնորոշ են կլոր, օվալաձև քլամիդոսպորներ (4.3-6.8 x 4.5-10.2 մկմ), գրանուլային պարունակությամբ գլանաձև արթրոսպորներ՝ օիդիումներ (3.4-5.1 x 7.8-15.6 մկմ) (Նկար 27l,n), քառանիստ կամ ութանիստ բյուրեղներ (Նկար 27r) (Badalyan *et al.,* 2015):

Խորքային կուլտուրայում, շտամից կախված, առաջացնում է խիտ միջուկով, անհարթ, կաշվենման (Gl-4, Gl-5), փխրուն միջուկով՝ բամբակափաթիլանման (Gl-1-3, Glu1) կամ հարթ, սնամեջ (Glu13) պելետներ (Նկար 4f): Առկա են վակուոլացված հիֆեր, ապիկալ հիֆային փքումներ, հազվադեպ՝ ութանիստ բյուրեղներ (Badalyan *et al.*, 2007):

***Ganoderma resinaceum* Boud.**
Աբեթասունկ խեժոտ

Պտղամարմինը՝ 10.0-45.0 սմ, կիսաշրջանաձև, հիմնականում նստադիր, երբեմն՝ հաստ ոտիկով, պատված լաքապատ, դեղնավուն, ապա՝ մուգ կարմրաշագանակագույն կամ սև, փայլուն, հաճախ՝ խամրած, սպորափոշով ծածկված կեղևով: Եզրը՝ սովորաբար բթացած, սպիտակ կամ կրեմագույն:

Հիմենաֆորը՝ սպիտակ, կրեմագույն, ապա՝ գորշ շագանակագույն, ծակոտիները՝ կլորավուն, խողովակները՝ 0.5-2.0 սմ:

Սպորները՝ 9.0-11.0 x 5.0-7.0 մկմ, էլիպսաձև, ձվաձև, հարթ կամ նուրբ ցանցավոր, վերևում՝ կտրված, հաճախ՝ կաթիլով: Սպորային զանգվածը կավադեղնավունից մինչև ժանգագույն:

Աճում է հարավային երկրներում, հիմնականում կենդանի ծառերի՝ կաղնու, ուռենու և հաճարենու վրա (Бондарцев, 1953):

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի չէ:

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, ապա՝ կրեմակիտրոնադեղնավուն, բամբակափոշենման, աճը՝ ճառագայթաձև, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ դեղնավուն (Նկար 2f): Աճման միջին արագությունը՝ 8.5-9.6 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի հիֆերը վակուոլացված, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, կլոր՝ անցքով կամ առանց անցքի: Առատորեն առաջացնում է տեսակին բնորոշ կլորավուն, օվալաձև կամ լիմոնաձև քլամիդոսպորներ՝ գաստերոսպորներ (7.9-8.5 x 10.6-13.7 մկմ) (Նկար 27o): Առկա են քառանիստ և ութանիստ բյուրեղներ (Նկար 21b):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է հարթ, կաշվենման պելետներ: Առկա են հիֆային փքումներ և բազմաթիվ կլորավուն կամ լիմոնաձև գաստերոսպորներ:

***Hericium erinaceus* (Bull.) Pers.**
Ոզնեսունկ փշոտ

Պտղամարմինը՝ կլորավունից տանձաձև, հաճախ՝ լայնակի ձգված, սուբստրատին ամրացող մասում նեղացող, փոքրիկ ոտիկով, հազվադեպ՝ նստադիր, սկզբում՝ մսոտ, ավելի ուշ՝ կարծր, սպիտակավուն, վարդագույն երանգով, եզրերում՝ ծալված, կոպիտ փշանման ելուստներով:

Հիմենաֆորը՝ փշոտ, փշերը՝ երկար, սուր, գլանաձև, ուղիղ կամ թույլ ծալված՝ կախված, սպիտակ, վարդագույն երանգով:

Սպորները՝ 5.0-7.0 x 4.5-6.0 մկմ, էլիպսաձև, կլորավուն կամ ձվաձև, խոշոր կաթիլով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի է:

Աշխարհում լայնորեն կուլտիվացվող հայտնի դեղասունկ է:

Հայաստանում հանդիպում է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում՝ կենդանի կաղնու, հաճարենու և լայնատերև այլ ծառատեսակների վրա (Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991): Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում (Թամանյան և ուրիշ., 2010):

Գաղութը՝ սպիտակ, ալրաբամբականման, բամբականման, ագարը՝ դարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 1.4 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի: Առկա են հիֆային փքումներ և օվալ քլամիդոսպորներ (5.6-6.4 × 8.8-14.5 մկմ):

Hypholoma fasciculare **(Huds.) P. Kumm.**
Կոճղասունկ կեղծ, ծծմբադեղին

Գլխարկը՝ 3.0-5.0 սմ տրամագծով, զանգականման, ավելի ուշ՝ կլորավուն, փռված, ծծմբադեղին, կենտրոնում մուգ թմբիկով, եզրը՝ փաթիլավոր:

Հիմենաֆորի թիթեղները՝ սերտաճած, խիտ, լայն, ծծմբադեղին:

Ոտիկը՝ 5.0-15.0 x 0.5-1.0 սմ, հիմքում՝ բարակող, թեքված, վերևի մասում՝ բաց դեղին, հիմքում՝ գորշ:

Սպորները՝ 5.0-8.0 x 4.0-5.0 մկմ, էլիպսաձև, դարչնագույն, մանուշակագույն երանգով:

Աճում է լայնատերև և փշատերև ծառատեսակների բների և կոճղերի վրա խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Թունավոր է:

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Իջևանի, Լոռու, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Бадалян, 1993; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, մետաքսանման, սադափե փայլով, ճառագայթաձև սեգմենտավորված, ալիքավոր, ավելի ուշ՝ միցելիալ ծգոններով: Միցելիումը և ագարը՝ բաց լիմոնագույնից մուգ դեղնադարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 2.0-2.7 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հաճախադեպ, կլորավուն, միակողմանի, հազվադեպ՝ երկկողմանի, անցքով կամ առանց անցքի (Նկար 25d,f): Առկա են արթրոսպորներ (1.6-3.1 x 2.0-10.0 մկմ) և կլորավուն, անհարթ մակերեսով ապիկալ քլամիդոսպորներ (4.0-4.2 x 3.9-4.0 մկմ), տձև, ասեղնաձև, քառանիստ և ութանիստ բյուրեղներ (Նկար 22c,d-f) (Гарибова, Бадалян, 1986; Гарибова *и др*., 1986; Kües *et al*, 2016):

Hypholoma lateritium **(Schaeff.) P. Kumm.**
Կոճղասունկ կեղծ, աղյուսակարմիր

Գլխարկը՝ 3.0-10.0 սմ տրամագծով, աղյուսակարմիր, կենտրոնում՝ ավելի մուգ, եզրերում՝ կախված սպիտակ թեփուկներով:

Հիմենաֆորի թիթեղները՝ սերտաճած, կեղտոտ դեղինից ծիթապտղագույն:

Ոտիկը՝ 5.0-10.0 x 1.0-1.5 սմ, թեփուկավոր, ամուր, հիմքում՝ բարակող, վերին մասում՝ ժանգադեղնավուն:

Սպորները՝ 6.0-7.0 x 3.0-4.0 մկմ, էլիպսաձև, մուգ մանուշակագույն, յուղի 1-2 կաթիլով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Թունավոր է:

Հայաստանում հանդիպում է Ապարանի, Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, բամբակաթավշանման, բաց դեղնանարնջագույն, ագարը՝ դեղինից շագանակագույն: Աճման միջին արագությունը՝ 2.5 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, կլորավուն, հաճախադեպ: Առկա են արթրոսպորներ:

***Kuehneromyces mutabilis* (Schaeff.) Singer & A. H. Smith**
Կոճղասունկ ամառային

Գլխարկը՝ 3.0-6.0 սմ տրամագծով, ուռուցիկ, ավելի ուշ՝ փռված, դեղնավուն, գորշ, վառ օխրագույն թմբիկով, թույլ թեփուկավոր կամ հարթ:
Հիմենաֆորի թիթեղները՝ թույլ վայր իջնող, լայն, խիտ, ժանգագույն:
Ոտիկը՝ 4.0-8.0 x 0.5-1.0 սմ, ուղիղ, սնամեջ, հիմքում՝ մուգ դարչնագույն, թաղանթանման օղակով, որից վերև՝ փաթիլանման թեփուկավոր, իսկ ներքև՝ թավշյա:
Սպորները՝ 6.8-7.2 x 3.8-4.8 մկմ, ձվաձև, էլիպսաձև, օխրագույնից գորշ:
Աճում է ծառերի բների և կոճղերի վրա խմբերով:
Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:
Ուտելի դեղասունկ է:
Հայաստանում տարածված է Ապարանի, Իջևանի և Լոռու ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, թավշյա, օդային միցելիումը՝ ճառագայթաձև, ալիքավոր: Աճման միջին արագությունը՝ 1.5-2.5 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ:
Դիկարիոնային միցելիումն օժտված է հաճախադեպ, կլորավուն, միակողմանի ճարմանդներով: Առկա են արթրոսպորներ և մանր բյուրեղներ:

***Laetiporus sulphureus* (Bull.) Murrill**
Աբեթասունկ ծծմբադեղին, բնափայտի ճուտիկ

Պտղամարմինը՝ դեղին՝ նարնջագույն, վարդագույն երանգով, հովհարաձև՝ կղմինդրանման դասավորված, երիտասարդ ժամանակ՝ մսոտ, հետագայում՝ կոշտ, հեշտ կոտրվող, մակերեսը՝ ալիքավոր, պատված սպիտակավուն փառով:
Հիմենաֆորի խողովակները՝ կարճ՝ մինչև 4.0 մմ երկարությամբ, կլորավուն, ծծմբադեղին:

Սպորները՝ 5.0-7.0 x 3.5-4.5 մկմ, ձվաձև կամ էլիպսաձև, հաճախ մեկ կենտրոնային կաթիլով, բաց դեղին (Бондарцев, 1953):

Աճում է ամռանը հիմնականում լայնատերև ծառատեսակների բների և կոճղերի վրա:

Առաջացնում է բնափայտի գորշ փտում:

Ուտելի է երիտասարդ ժամանակ: Դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի, Իջևանի, Լոռու, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում (Բադալյան և Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ բաց դեղնավուն, ծիրանագույն, ավելի ուշ՝ նարնջագույն, ալրափոշենման, հատիկավոր, եզրը՝ թափանցիկ, ագարը՝ համարյա անփոփոխ, բաց նարնջագույն: Աճման միջին արագությունը՝ 4.8-6.1 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հազվադեպ են, փոքր, առանց անցքի, միակողմանի: Առկա են բազմաթիվ ապիկալ և ինտերկալար ալևրիկ տիպի քլամիդոսպորներ (4.8-6.5 x 12.0-20.0 մկմ)՝ *Sporotrichum versisporum* անամորֆ, հազվադեպ՝ գլանաձև, երկկորիզանի օիդիումներ՝ արթրոսպորներ (6.5-10.5 x 9.6-25.0 մկմ) (Նկար 21d) (Badalyan, Sakeyan, 2004; Clémençon, 2012; Kües *et al*, 2016):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով, հարթ, նարնջագույն պելետներ (Նկար 4d): Առկա են *S. versisporum* ալևրիկ քլամիդոսպորներ և արթրոսպորներ (Badalyan, Sakeyan, 2007):

Lentinula edodes **(Berk.) Pegler**
Շիիտակե, սև սունկ

Գլխարկը՝ 5.0-15.0 սմ տրամագծով, գնդաձև, կլորավուն, սպիտակավունից դարչնագույն, թեփուկավոր:

Հիմենաֆորի թիթեղները՝ սեղմված, սպիտակ:

Ոտիկը՝ 3.0-5.0 x 0.8-1.3 սմ, թեք, հիմքում՝ կոնաձև, թեփուկավոր, սպիտակ:

Սպորները՝ 5.8-6.4 x 2.8-3.3 մկմ, էլիպսաձև, փոքրիկ ծլման ելուստով:

Աճում է կաղնու, բարդու, թթենու, հաճարենու և լայնատերև այլ ծառատեսակների բնափայտի վրա, խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Աշխարհում հայտնի լայնորեն կուլտիվացվող արժեքավոր ուտելի դեղասունկ է: Տարածված է Արևելյան Ասիայում, Հարավային Ամերիկայում (Andary *et al*., 1991):

Հայաստանում նկարագրված չէ:

Գաղութը՝ սպիտակ, օդային միցելիումը՝ ճառագայթաալիքաձև, ագարը՝ դարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 2.8-3.2 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է միցելիալ ծգոններ, պրիմորդիումներ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, հաճախադեպ, կլորավուն, աղեղնաձև, հիմնականում անցքով (Նկար 25a,b,e,g): Առկա են հիֆային օղակներ և ուրանիստ բյուրեղներ (Նկար 23a,b; 24e):

***Lentinus tigrinus* (Bull.) Fr.**
Լենտինուս վագրային

Գլխարկը՝ 5.0-10 սմ տրամագծով, դեպի ներս շրջված եզրերով, ձագարանման, մակերեսը՝ մուգ թեփուկավոր:

Հիմենաֆորի թիթեղները՝ վայր իջնող, նեղ, անհավասար ատամնավոր եզրով, կրեմագույնից դեղնավուն:

Ոտիկը՝ 3.0-8.0 x 1.5 սմ, հիմքում՝ հաստացող, արմատանման ծգված, մակերեսը՝ օղակաձև դասավորված թեփուկներով, վաղ անհետացող թաղանթանման օղակով:

Սպորները՝ 6.5-8.0 x 3.5 մկմ, էլիպսաձև, անգույն:

Պտղամիսը՝ սպիտակ, ոտիկի հիմքում՝ մուգ, սեղմելիս՝ կարմրող:

Աճում է անտառներում, պուրակներում՝ բարդու, ուռենու և լայնատերև այլ ծառատեսակների կոճղերի վրա:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի է:

Հայաստանում տարածված է Երևանի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բաղալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980, Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բամբականման, ավելի ուշ՝ բաց դարչնագույն, կաշվետիպ, ագարը՝ անփոփոխ: Աճման միջին արագությունը՝ 6.0-7.2 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է ձևավորված պտղամարմիններ (Նկար 6a):

Դիկարիոնային միցելիումն օժտված է միակողմանի, կլորավուն՝ անցքով կամ առանց անցքի ճարմանդներով: Առկա են կլորավուն և լիմոնաձև քլամիդոսպորներ, ասեղնաձև բյուրեղներ:

***Lepista nuda* (Bull.) Cooke**
Լեպիստա մանուշակագույն

Գլխարկը՝ 4.0-5.0 սմ տրամագծով, ուռուցիկ, մսոտ, վերևից սեղմված, մոխրադարչնագույնից մանուշակագույն, եզրերը՝ բարակ, դեպի ներս շրջված:

Հիմենաֆորի թիթեղները՝ հավասար, խիտ, համարյա ազատ, մանուշակագույն:

Ոտիկը՝ 4.0-10.0 x 1.0-2.5 սմ, դեպի հիմքը հաստացող, ամուր, վերևում ալրոտ, մանուշակագույն:

Սպորները՝ 6.0-7.0 x 4.0-5.0 մկմ, էլիպսաձև, վարդագույն:

Աճում է անտառներում, մարգագետիններում, դաշտերում:

Ուտելի է:

Հայաստանում տարածված է Երևանի, Իջևանի, Լոռու և Դարալագյազի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ բաց մանուշակագույն, խավոտ, եզրը՝ հավասար: Աճում է դանդաղ. միջին արագությունը՝ 1.5-1.7 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, փոքր անցքով, երկարավուն, մեդալիոնաձև, հիֆերի մակերեսը գորտնուկավոր (Նկար 25c; 26c): Առկա են արթրո- և քլամիդոսպորներ, քառանիստ և տձև բյուրեղներ:

***Mycena inclinata* (Fr.) Quél.**
Միցենա թեքված

Գլխարկը՝ 2.0-3.0 սմ տրամագծով, զանգականման, թմբիկով, դեղնամոխրագույն:

Հիմենաֆորի թիթեղները՝ կպած, սպիտակամոխրագույն:

Ոտիկը՝ 6.0-8.0 սմ, բարակ, սնամեջ, սպիտակամոխրագույն, փայլուն:

Սպորները՝ 8.0-9.5.0 x 4.8-6.0 մկմ, անգույն:

Աճում է կաղնու կոճղերի, քայքայված բների կամ անտառային թաղիքի վրա մեծ խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի չէ:

Հայաստանում հանդիպում է Իջևանի, Սևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ բամբականման, սպիտակ, ավելի ուշ՝ կրեմադարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 3.5 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հաճախադեպ են, միակողմանի, մանր, կլորավուն: Առկա են հիֆային օղակներ և օիդիումներ՝ արթրոսպորներ:

Pholiota populnea **(Pers.) Kuyper & Tjall. Beuk.**
Թեփուկասունկ բայքայող

Գլխարկը՝ 5.0-20.0 սմ տրամագծով, ուռուցիկ, կլորավուն, սպիտակադեղնավուն, կենտրոնում՝ ավելի մուգ, թմբիկով՝ լայն, սեղմված թեփուկներով:

Ոտիկը՝ 3.0-7.0 x 2.0-3.0 սմ, կենտրոնային, երբեմն՝ արտակենտրոն, սպիտակադեղնավուն, մետաքսյա, փաթիլանման սպիտակ թեփուկներով, հիմքի մոտ՝ ուռուցիկ՝ արմատանման, փքված, օղակը՝ սպիտակ, փաթիլավոր, անհետացող:

Հիմենաֆորի թիթեղները՝ խիտ, թույլ սերտաճած, ոտիկի վրա ծալքերով իջնող, սկզբում՝ սպիտակ, հետո՝ ծխախոտադարչնագույն:

Սպորները՝ 7.5-8.0 x 5.0 մկմ, էլիպսաձև, ձվաձև, դեղնագորշ:

Աճում է հիմնականում բարդու կամ լայնատերև այլ ծառերի կամ կոճղերի վրա:

Առաջացնում է բնափայտի գորշ փտում:

Ուտելի է:

Հայաստանում հանդիպում է Երևանի, Լոռու և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, բրդաքեչայանման, տեղ-տեղ ավելի խիտ, հետագայում՝ փոշենման, տեղ-տեղ դարչնագույն, ագարը՝ գունատ: Աճման միջին արագությունը՝ 2.6 մմ/օր: Հեշտությամբ պտղամարմիններ է առաջացնում կուլտուրայում (Նկար 6b):

Դիկարիոնային միցելիումն օժտված է կլորավուն, միակողմանի, անցքով կամ առանց անցքի ճարմանդներով: Առկա են ապիկալ և ինտերկալար լիմոնաձև քլամիդոսպորներ, եզակի հիֆային օղակներ, ալոցիստեր և ութանիստ բյուրեղներ:

***Piptoporus betulinus* (Bull.) Karst.**
Աբեթասունկ կեչու, կեչու սպունգ

Պտղամարմինը՝ միամյա, երկարությունը՝ 4.0-20.0 սմ, լայնությունը՝ 5.0-20.0 սմ, հաստությունը՝ 2.0-6.0 սմ, նստադիր կամ սաղմնային ոտիկով, մսոտ կամ նուրբ խցանային, սմբակաձև, կլորավուն: Մակերեսը՝ հարթ, բաց մոխրագույն, դեղնավուն կամ փայտագույն, կեղևը բարակ, հետագայում՝ գունատվող, ճաքճքած, եզրերը՝ կլորավուն:

Հիմենաֆորի խողովակները՝ 2.0-8.0 մմ, կլորավուն:

Սպորները՝ 4.5-6.0 x 1.25-1.5 մկմ, գլանաձև, թույլ ծռված, անգույն (Бондарцев, 1953):

Առաջացնում է բնափայտի գորշ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ:

Հայաստանում տարածված է Իջևանի, Լոռու և Սևանի ֆլորիստական շրջաններում՝ կենդանի կեչու և ընկած ճյուղերի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բամբակափաթիլանման, կենտրոնում՝ խիտ, եզրը՝ հավասար, ագարը՝ անփոփոխ: Աճման միջին արագությունը՝ 3.6-4.9 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային հիֆերը վակուոլացված են, ճարմանդները հաճախադեպ, անցքով, միակողմանի, փոքր, կլորավուն և հսկա, աղեղնաձև: Առկա են անսեռ թալիկ օվալ արթրոսպորներ, հազվադեպ՝ բլաստիկ սպորներ, ծերացող կուլտուրայում՝ երկարավուն, օվալաձև կուտիկուլային բջիջներ, քառանիստ և ութանիստ բյուրեղներ (Badalyan, Sakeyan, 2004):

Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ (Նկար 4e): Հիֆերը ինտենսիվ վակուոլացված են: Առկա են արթրոսպորներ և գլանաձև կուտիկուլային բջիջներ:

***Pleurotus cornucopiae* (Paulet) Rollanot**
Ոստրեսունկ առատ, եղջյուրաձև

Պտղամարմինները աճում են կղմինդրանման դասավորված, խմբերով:

Գլխարկը՝ 4.0-8.0 սմ տրամագծով, ձագարաձև, եղջյուրաձև, անգույն, սպիտակավուն, գորշավուն:

Հիմենաֆորի թիթեղները` մինչև ոտիկի հիմքը վայր իջնող, միջին խտության, սպիտակ:

Ոտիկը` կենտրոնային կամ արտակենտրոն, գլխարկի գույնի, հիմքում` քեչայանման:

Սպորները` 6.5-11.0 x 3.0-4.0 մկմ, գլանաձև, ձգված, ձվաձև, երբեմն` թեքված:

Աճում է փշատերև և լայնատերև անտառներում` թեղու, հաճարենու և այլ ծառերի կոճղերի կամ ընկած բների վրա, խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Հայտնի ուտելի դեղասունկ է:

Հայաստանում հանդիպում է Ապարանի, Երևանի, Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը` սպիտակ, բամբականման, կենտրոնում` խիտ, աճում է միցելիալ ձգոններով: Աճման միջին արագությունը` 6.3 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանղները հաճախադեպ են, կլորավուն, միակողմանի: Առկա են հիֆային օղակներ, արթրոսպորներ:

Pleurotus eryngii **(DC.) Quél.**
Ոստրեսունկ տափաստանային

Պտղամարմինները աճում են առանձին կամ փոքր խմբերով:

Գլխարկը` 8.0-15.0 սմ տրամագծով, մսոտ, սպիտակավուն, թեփուկավոր:

Հիմենաֆորի թիթեղները` վայր իջնող, լայն, նոսր, սպիտակավուն:

Ոտիկը` 4.0-5.0 x 1.0-1.5 սմ, արտակենտրոն, երբեմն` կողքային, հիմքում` հաստացող, սպիտակ:

Սպորները` 7.0-9.0 x 4.0 մկմ, ձգված ձվաձև, անգույն:

Աճում է հովանոցազգիների *Eryngium* և *Ferula* ցեղերի տեսակների արմատների վրա: Թույլ մակաբույծ է:

Լայնորեն կուլտիվացվող ուտելի դեղասունկ է:

Հայաստանում հանդիպում է Երևանի ֆլորիստական շրջանում (Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008): Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում (Թամանյան և ուրիշ, 2010):

Գաղութը` սպիտակ, փարթամ, բամբակաքեչայանման, կոնցենտրիկ շրջաններով, եզրը՝ անհավասար նոսրացող, հաճախ ծգոններով, ագարը՝ բաց դեղնավուն: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ: Միցելիումի աճման միջին արագությունը՝ 3.2-6.4 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հաճախադեպ են, կլորավուն, միակողմանի, հազվադեպ՝ երկկողմանի: Առկա են հիֆային օղակներ, հիֆային փքումներ, արթրոսպորներ, նեմատոդ որսացող՝ հիմքում լայնացող ոտիկով, կլորավուն բլաստիկ կառուցվածքներ, ինչպես նաև ուղղանկյուն, ձողիկաձև և տձև բյուրեղներ:

***Pleurotus ostreatus* (Jacq.) P. Kumm.**
Ոստրեսունկ սովորական, կախասունկ, ականջասունկ

Պտղամարմինները աճում են կղմինդրանման դասավորված, խմբերով:

Գլխարկը՝ 10.0-20.0 սմ տրամագծով, անհավասար, կենտրոնում՝ սեղմված, սպիտակավունից մոխրագույն, դարչնագույն, գորշավուն:

Հիմենաֆորի թիթեղները՝ վայր իջնող, լայն, նոսր, սպիտակավուն, եզրերում՝ ավելի մուգ:

Ոտիկը՝ 2.0-4.0 x 2.0 սմ, ապակենտրոն կամ բացակայում է, հիմքում՝ խավոտ, սպիտակավուն:

Սպորները՝ 9.0-11.0 x 4.0-6.0 մկմ, էլիպսաձև, անգույն:

Աճում է սաղարթավոր ծառերի բների և կոճղերի վրա:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Լայնորեն կուլտիվացվող շատ հայտնի ուտելի դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի, Ապարանի, Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, ավելի ուշ՝ դեղնավուն, փարթամ, բամբակաբրդանման, կոնցենտրիկ շրջաններով, եզրը՝ արտահայտված, ագարը՝ անգույն (Նկար 3a): Աճման միջին արագությունը՝ 6.2-7.3 մմ/օր: Կուլտուրայում հեշտությամբ առաջացնում է ձևավորված պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, հաճախադեպ, հազվադեպ՝ երկկողմանի, կլորավուն, երբեմն՝ անցքով: Առկա են արթրոսպորներ, եզակի քլամիդոսպորներ, նեմատոդ որսացող, լայնացող ոտիկով կլորավուն, արտազատող բջիջներ, մեծ քանակությամբ բյուրեղներ (Նկար 24d) (Kües *et al.*, 2016):

***Polyporus squamosus* (Huds.) Fr.**
Աբեթասունկ թեփուկավոր

Պտղամարմինները՝ միամյա, առանձին, երբեմն՝ իրար միացած: Գլխարկը՝ 5.0-50.0 սմ տրամագծով, կլորավուն, հովհարաձև, կենտրոնում՝ սեղմված, մսոտ, մակերեսը՝ կրեմագույն, դեղնավուն, պատված կոնցենտրիկ շրջաններով դասավորված մուգ գորշ, խոշոր թեփուկներով: Եզրը՝ բարակ, սուր, թեքև ալիքավոր, պտղամիսը՝ սպիտակավուն, մսոտ, ավելի ուշ՝ կաշվետիպ:

Ոտիկը՝ 2.0-14.0 սմ երկարությամբ, ամուր, կրեմագույն, հիմքում՝ փքված:

Հիմենաֆորի խողովակները՝ կարճ, ցանցաձև, հետագայում՝ երկարավուն, հաստ միջնապատերով, ծակոտիները՝ ատամնավոր եզրով, մակերեսը՝ կրեմագույն, գորշավուն:

Սպորները՝ 14.0-16.0 x 4.0-6.0 մկմ, երկարավուն, էլիպսաձև, բարակ պատերով, խոշոր կամ մի քանի մանր կաթիլներով, անգույն:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի է երիտասարդ ժամանակ:

Աճում է Հայաստանի ֆլորիստական բոլոր շրջաններում՝ կենդանի և ընկած տարբեր ծառատեսակների բնափայտի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, քեչայանման, ավելի ուշ՝ փոշենման, կենտրոնում՝ նարնջադարչնագույն, եզրը՝ արտահայտված, ագարը՝ տեղ-տեղ շագանակագույն: Աճման միջին արագությունը՝ 7.5-7.8 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պտղամարմիններ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, կլորավուն, հաճախակադեպ: Առկա են անսեռ թալիկ արթրոսպորներ և օվալ քլամիդոսպորներ:

***Polyporus varius* (Pers.) Fr.**
Աբեթասունկ փոփոխվող

Պտղամարմինները՝ միամյա, աճում են մեկական կամ խմբերով, հովհարաձև, տափակ, երբեմն՝ փքված, կաշվենման, ավելի ուշ՝ կեղեվախցանային: Մակերեսը՝ հարթ, ճառագայթանման թեքևակի գծավորված, դժգույն, օխրագույնից դեղնավուն, եզրերում՝ սուր, ժանգագույն, ավելի ուշ՝ գունաթափվող:

Ոտիկը՝ կողքային, ապակենտրոն կամ կենտրոնային, 0.5-5.0 սմ, հարթ, վերևում՝ կրեմադեղնավուն, հիմքի մոտ՝ մուգ շագանակագույն, սև:

Պտղամիսը՝ բարակ, դեղնավուն, կաշվենման, չորանալիս՝ փայտանման:

Հիմենաֆորի խողովակները՝ 1.0-3.0 մմ, ոտիկի վրա իջնող, ծակոտիները՝ կլորավուն՝ 4.0-6.0 x 1.0 մմ, խողովակաշերտը՝ կրեմագույնից դեղնաօխրագույն:

Սպորները՝ 6.0-9.0 x 3.0-3.5 մկմ, էլիպսաձև, գլանաձև, իլիկաձև, պարունակությունը՝ հատիկավոր:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի չէ:

Հայաստանում տարածված է Երևանի, Իջևանի, Լոռու, Դարալագյազի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստական շրջաններում՝ ընկած լայնատերև ծառատեսակների բնափայտի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, սկզբում՝ քեչայանման՝ կոնցենտրիկ շրջաններով, ավելի ուշ՝ կաշվետիպ, բաց դարչնագույն, ագարը՝ բաց դարչնագույն: Աճման միջին արագությունը՝ 5.0 մմ/օր: Հեշտությամբ պտղամարմիններ է առաջացնում կուլտուրայում:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հաճախադեպ են, կլորավուն, միակողմանի: Առկա են անսեռ արթրոսպորներ՝ օիդիումներ, մեծ քանակությամբ բյուրեղներ:

Psathyrella candolleana **(Fr.) Maire**
Պսատիրելա Կանդոլի

Գլխարկը՝ 4.0-8.0 սմ տրամագծով, լայն, զանգականման, ճառագայթաձև կնճռոտած, ճաքճքվող, երբեմն՝ մասնավոր ծածկոցի մնացորդներով, օխրագույն, դարչնագույն:

Հիմենաֆորի թիթեղները՝ սերտաճած, խիտ, մոխրագույն, մանուշակագույն, մուգ դարչնագույն, սպիտակ եզրերով:

Ոտիկը՝ 7.0-10.0 x 0.5-0.8 սմ, գլանաձև, սնամեջ, սպիտակավուն, կրեմագույն, մետաքսյա, նուրբ փաթիլավոր:

Սպորները՝ 6.0-10.0 x 4.0-5.0 մկմ, օվալ, հարթ մակերեսով, ծլման ելուստով, կարմրագորշ:

Աճում է անտառներում և այգիներում՝ ընկած ծառերի վրա, մեծ խմբերով:

Ուտելի դեղասունկ է:

Հայաստանում տարածված է Երևանի և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ սպիտակ, ավելի ուշ՝ դեղնավուն, փարթամ, բամբականման, կենտրոնում նոսր, եզրը՝ անհավասար, ագարը՝ դեղնավուն: Աճման միջին արագությունը՝ 5.5-7.2 մմ/օր:

Դիկարիոնային հիֆերի գրեթե յուրաքանչյուր սեպտան օժտված է միակողմանի, փոքր, կլոր ճարմանդներով՝ հիմնականում՝ առանց անցքի: Առկա են պարզ հիֆային օղակներ, քլամիդոսպորներ, գլանաձև կամ ծողիկաձև բյուրեղներ:

***Schizophyllum commune* Fr.**
Ճեղքաթերթիկ սովորական

Պտղամարմինը՝ 1.0-3.0 սմ տրամագծով, նստադիր, բողբոջանման, խեցենման, երբեմն՝ թաթաձև, մակերեսը՝ խավոտ, կոշտ մազմզոտ, մոխրագույն:

Հիմենաֆորի թիթեղները՝ ճառագայթաձև, մոխրագույն:

Ոտիկը բացակայում է:

Սպորները՝ 5.0-6.0 x 2.0-3.0 մկմ, գլանաձև, անգույնից թույլ վարդագույն:

Աճում է կենդանի և ընկած ծառերի, մշակված փայտանյութի վրա խմբերով:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում: Մակաբույծ է:

Ուտելի չէ: Հայտնի դեղասունկ է:

Հայաստանում հանդիպում է Երևանի, Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980):

Գաղութը՝ սպիտակ, խավոտ, խիտ, բամբակափաթիլանման, ագարը՝ անգույն: Աճման միջին արագությունը՝ 6.5-7.5 մմ/օր: Հեշտությամբ պտղամարմիններ է առաջացնում կուլտուրայում (Նկար 6d):

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները հաճախադեպ են, իսկա, մանր, կլորավուն, միակողմանի, հիմնականում առանց անցքի: Առկա են կլորավուն կամ էլիպսաձև քլամիդոսպորներ (4.5-7.0 x 6.5-14.5 մկմ), տեսակին բնորոշ հիֆային տուբերկուլներ՝ տոքսոցիստերի նման ուղղահայաց կարճ ելուստներ, բազմաթիվ քառանիստ բյուրեղներ (Նկար 21c; 26f) (Badalyan, Kües, 2015; Kües *et al*., 2016):

***Suillus luteus* (L.) Roussel**
Յուղասունկ սովորական, ոսկեդեղին

Գլխարկը՝ 5.0-10.0 սմ տրամագծով, բարձիկանման, դեղնավուն, դարչնաշագանակագույն, լորձոտ: Պտղամիսը՝ սպիտակադեղնավուն:

Հիմենաֆորի խողովակները՝ դեղին, ծակոտիները՝ կլորավուն:

Ոտիկը՝ 6.0-10.0 x 1.0-2.0 սմ, գլանաձև, վերևում դեղնավուն, ներքևում՝ գորշ: Օղակը՝ լայն, սպիտակավուն, մանուշակագույն երանգով:

Սպորները՝ 7.5-9.8 x 3.0-3.5 մկմ, իլիկաձև, դեղնավուն, գորշ:

Աճում է փշատերև անտառներում, առաջացնում է միկորիզա:

Հայտնի ուտելի դեղասունկ է (Badalyan, 2012):

Հայաստանում տարածված է Ապարանի, Սևանի, Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, 1980; Нанагюлян, 2008):

Գաղութը՝ թավշյա, խիտ, թմբիկաձև, կրեմագույն, ավելի ուշ՝ կակաոյի երանգով, մուգ դարչնագույն էքսուդատով, եզրը՝ հավասար, բաց կրեմագույն, ագարը՝ մուգ դարչնագույն (Նկար 3c): Աճման միջին արագությունը՝ 1.0 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները կլորավուն են, միակողմանի, հաճախադեպ: Առկա է տեսակին բնորոշ հիֆերի զույգ ճյուղավորում (Նկար 26e) (Бисько *и др*., 1983):

***Trametes gibbosa* (Pers.) Fr.**
Տրամետես սապատավոր

Պտղամարմինները՝ խցանային, կիսաշրջանաձև, բարձիկանման կամ տափակ, հիմքում՝ թմբիկով, նստադիր, երկարությունը՝ 5.0-15.0 սմ, լայնությունը՝ 3.0-10.0 սմ, հաստությունը՝ 1.0-4.0 սմ: Մակերեսը՝ թավշյա կամ քեչայանման, գոտիական, սպիտակից մոխրագույն, դեղնավուն, երբեմն՝ ջրիմուռների առկայությամբ՝ կանաչավուն, հիմքում՝ ավելի մուգ, եզրը՝ հավասար, բութ:

Աճում է մեկական կամ կղմինդրանման դասավորված խմբերով:

Հիմենաֆորի խողովակները՝ 0.3-0.5 x 1.2 մմ, հաստապատ, սպիտակավուն կամ բաց դեղին, ծակոտիները՝ համարյա ուղղանկյուն կամ ձգված, տեղ-տեղ լաբիրինթանման:

Սպորները՝ 4.0-5.0 x 2.0-2.5 մկմ, անգույն, գլանաձև, մի կողմից՝ սեղմված, հիմքում՝ թեթև ձգված:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում (Бондарцев, 1953):

Ուտելի չէ:

Հայաստանում լայնորեն տարածված է ֆլորիստական բոլոր շրջաններում՝ կաղնու, հաճարենու, բոխու և լայնատերև այլ ծառատեսակների ընկած ճյուղերի, կոճղերի վրա (Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բաց կրեմագույն, բամբակաբրդաքեչայանման, ավելի ուշ՝ ալրանման, կրեմագույն, ագարը՝ դեղնավուն: Աճման միջին արագությունը՝ 5.0-5.8 մմ/օր:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, մանր, կլորավուն, հաճախադեպ: Առկա են կլորավուն քլամիդոսպորներ:

Խորքային կուլտուրայում միցելիումը առաջացնում է հարթ, սնամեջ պելետներ: Առկա են հիֆային փքումներ:

Trametes hirsuta **(Wulfen) Pilát**
Տրամետես կոշտամազ

Պտղամարմինը՝ կոշտ կաշվենման, տափակ, կիսաշրջանաձև կամ բողբոջանման, նստադիր, երկարությունը՝ 3.0-10.0 սմ, լայնությունը՝ 1.5-5.0 սմ, հաստությունը՝ 0.3-1.0 սմ, մակերեսը՝ գոտիական ակոսավոր, պատված կոշտ մազիկներով, դեղնավուն, մոխրագույն, ժանգագույն, հասուն ժամանակ՝ ավելի մուգ, եզրը՝ հաստացող, կլորավուն, ամբողջական կամ ալիքավոր, բլթակավոր, քեչայանման, հաճախ ժանգագույն կամ ավելի մուգ:

Աճում են մեկական, հաճախ կղմինդրանման դասավորված խմբերով:

Հիմենաֆորի խողովակները կարճ են, ծակոտիները՝ կլորավուն՝ 0.2-5.0 x 0.4 մմ, եզրերը՝ բութ, սպիտակավուն, դեղնավուն կամ մոխրագույն: Հիմենիալ շերտում հանդիպում են ողկույզանման հիֆային խրձեր:

Սպորները՝ 6.0-8.0 x 2.0-3.0 մկմ, անգույն, հարթ, գլանաձև, հիմքում՝ թեթև ձգված:

Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:

Ուտելի չէ:
Հայաստանում լայնորեն տարածված է ֆլորիստական բոլոր շրջաններում՝ կաղնու, հաճարենու, բոխու, կեչու, հացենու և այլ լայնատերև ծառատեսակների ընկած ճյուղերի և կոճղերի վրա (Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, բամբակաբրդանման, դեպի եզրը՝ նոսրացող, ավելի ուշ՝ խիտ, բրդաքեչայանման, ագարը՝ անփոփոխ: Աճման միջին արագությունը՝ 3.0-4.3 մմ/օր:
Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, մանր, կլորավուն, հաճախադեպ: Առկա են անսեռ քլամիդոսպորներ և օիդիումներ՝ արթրոսպորներ:

***Trametes versicolor* (L.) Lloyd**
Տրամետես բազմագույն

Պտղամարմինները՝ հովհարաձև, երկարությունը՝ 1.0-6.0 սմ, լայնությունը՝ 1.0-10.0 սմ, հաստությունը՝ 0.1-0.5 սմ, նստադիր, հաճախ՝ հիմքերով սերտաճած: Մակերեսը՝ թավշյա, մոխրագույնի, դեղինի, կրեմագույնի և շագանակագույնի տարբեր երանգների, երբեմն՝ սև կոնցենտրիկ շրջաններով, եզրը՝ ալիքավոր, ավելի բաց, պտղամիսը՝ բարակ, սպիտակ, կաշվետիպ: Աճում է կղմինդրանման դասավորված խմբերով:
Հիմենաֆորի խողովակները՝ կարճ, ծակոտիները՝ կլորավուն՝ 3.0-5.0 x 1.0 մմ, նուրբ ատամնավոր եզրերով, սպիտակավուն կամ կրեմագույն:
Սպորները՝ 5.0-7.0 x 2.0-2.5 մկմ, անգույն, գլանաձև, մի կողմից՝ սեղմված, հիմքում՝ սրված:
Առաջացնում է բնափայտի սպիտակ փտում:
Ուտելի չէ: Հայտնի դեղասունկ է:
Հայաստանում լայնորեն տարածված է ֆլորիստական բոլոր շրջաններում՝ տարբեր լայնատերև ծառատեսակների ընկած ճյուղերի և կոճղերի վրա (Բադալյան, Ղարիբյան, 2008; Мелик-Хачатрян, Мартиросян, 1971; Нанагюлян, Таслахчьян, 1991):

Գաղութը՝ սպիտակ, սկզբում բրդանման, ավելի ուշ՝ ալրազամշանման, եզրերում՝ նոսրացող, ագարը՝ անփոփոխ: Աճման միջին արագությունը՝ 4.7-6.3 մմ/օր:
Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, մանր,

կլորավուն, հաճախադեպ: Առկա են արթրոսպորներ (7.0-10.5 x 11.0-14.5 մկմ), քլամիդոսպորներ, ապիկալ հիֆային փքումներ, քառանիստ և ծողիկաձև բյուրեղներ:

Volvariella bombycina **(Schaeff.) Singer**
Վոլվարիելլա մետաքսյա

Գլխարկը՝ 8.0-20.0 սմ տրամագծով, մետաքսյա, գնդաձև, զանգաձև, ավելի ուշ՝ փռված, արտահայտված կենտրոնային թմբիկով, սպիտակ, ապա՝ դեղնավուն:

Ոտիկը՝ 8.0-15.0 x 1.0-2.0 սմ, կարծր, թելիկավոր, սպիտակ, առանց օղակի, հիմքում՝ լայն, բլթակավոր վոլվայով:

Հիմենաֆորի թիթեղները՝ ազատ, հաճախադեպ, սպիտակավուն, հասունանալիս՝ վարդագույն:

Սպորները՝ 7.0-10.0 x 5.0-6.5 մկմ, էլիպսաձև, ձվաձև, հարթ, վարդագույն:

Աճում է կենդանի և մեռած լայնատերև ծառատեսակների բների վրա, հաճախ՝ փչակներում:

Ուտելի է:

Հայաստանում նկարագրված է Երևանի և Իջևանի ֆլորիստական շրջաններում (Нанагюлян, 2008): Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում (Թամանյան և ուրիշ, 2010):

Գաղութը՝ բաց դեղնակրեմագույն, փարթամ, նոսր, թափանցիկ, բարձր, ավելի ուշ՝ հատիկավոր, եզրը՝ հավասար, ագարը՝ դեղնավուն (Նկար 3b): Աճման միջին արագությունը՝ 7.9 մմ/օր: Կուլտուրայում առաջացնում է պրիմորդիումներ:

Դիկարիոնային միցելիումի ճարմանդները միակողմանի են, կլորավուն: Առկա են ցեղին բնորոշ բլաստիկ օվալ քլամիդոսպորներ (Նկար 21e) (Clémançon, 2012):

Աղյուսակ 1. Որոշ ագարիկոմիցետային սնկերի միցելիումի մորֆոլոգիական նկարագրությունը աճման 6-րդ օրը քաղծու-ագար և քաղծու-ջուր սննդամիջավայրերի վրա (pH 6.0, 25°C)

Կարգ / ընտանիք / տեսակ	Գաղութ	Միցելիում	Անամորֆ
Agaricales **Agaricaceae** *Coprinus comatus*	Սպիտակ, խավոտ, նոսր, բամբականման, եզրը՝ հավասար, ագարը՝ կենտրոնում կարմրադարչնագույն; *$ԱԱ_{միջ}$= 3.7-4.0 մմ/օր	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հաճախադեպ, հիմնականում առանց անցքի; առկա են պարզ հիֆային օղակներ, նեմատոդ որսացող կլոր, անհարթ մակերեսով գլխիկներ ունեցող ճյուղավորված կառուցվածքներ, բյուրեղներ	Արթրոսպորներ (մոնոկարիոնային միցելիումի վրա օիդիումներ), քլամիդոսպորներ
		Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն, հարթ պելետներ	Նկարագրված չէ
Mycenaceae *Mycena inclinata*	Սպիտակ, բամբականման, ավելի ուշ՝ կրեմադարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 3.5 մմ/օր	Ճարմանդները՝ կլորավուն, մանր, միակողմանի, հաճախադեպ; առկա են հիֆային օղակներ	Արթրոսպորներ (օիդիումներ)

Omphalotaceae *Lentinula edodes*	Սպիտակ, ճառագայթաալիքաձև, ագարը՝ դարչնագույն; ԱԱ$_{միջ}$= 2.8-3.2 մմ/օր; առաջացնում է միցելիալ ծգոններ, պրիմորդիումներ	Ճարմանդները՝ կլորավուն, աղեղնաձև, հիմնականում անցքով, միակողմանի; առկա են հիֆային օղակներ, ուքանիստ բյուրեղներ	Նկարագրված չէ
Physalacriaceae *Armillaria mellea*	Սպիտակ, բամբականման, ավելի ուշ՝ մուգ շագանակագույն, կոնցենտրիկ շրջաններով, կաշվենման, եզրը՝ բլթակավոր կամ ալիքաձև, ագարը՝ մուգ շագանակագույն; ԱԱ$_{միջ}$= 0.8-1.2 մմ/օր; առաջացնում է ձևավորված ռիզոմորֆներ	Ճարմանդները բացակայում են; առկա են բազմաթիվ անաստոմոզներ, հիալինային կուտիկուլային բջիջներ	Նկարագրված չէ
Flammulina velutipes	Սպիտակ, ալրափոշենման, ավելի ուշ՝ կենտրոնից դեղնող, դեղնադարչնագույն, եզրը՝ թույլ արտահայտված, ագարը՝ տեղ-տեղ մուգ շագանակագույն; ԱԱ$_{միջ}$= 5.5-7.0 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, մանր, կլորավուն, հաճախադեպ; առկա են հիֆային օղակներ, ծոդիկանման բյուրեղներ	Արթրոսպորներ (օիդիումներ), քլամիդոսպորներ

Pleurotaceae *Pleurotus cornucopiae*	Սպիտակ, բամբականման, կենտրոնում խիտ, միցելիալ ծգոններով; ԱԱ$_{միջ}$= 6.3 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հաճախադեպ; առկա են հիֆային օղակներ	Արթրոսպորներ
Pleurotus eryngii	Սպիտակ, փարթամ, բամբակաքեչայանման, կոնցենտրիկ շրջաններով, ծգոններով, եզրը՝ անհավասար, ագարը՝ դեղնավուն; ԱԱ$_{միջ}$= 3.2-6.4 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հազվադեպ երկկողմանի, հաճախադեպ; առկա են հիֆային օղակներ և փքումներ, նեմատոդ որսացող կլորավուն բլաստիկ կառուցվածքներ, ուղղանկյուն, ծողիկաձև և տձև բյուրեղներ	Արթրոսպորներ
Pleurotus ostreatus	Սպիտակ, ավելի ուշ դեղնավուն, փարթամ, բամբակաբրդանման, կոնցենտրիկ շրջաններով, եզրը՝ արտահայտված, ագարը՝ անգույն; ԱԱ$_{միջ}$= 6.2-7.3 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, հազվադեպ երկկողմանի, հաճախադեպ, կլորավուն, երբեմն անցքով; առկա են նեմատոդ որսացող արտազատող կլորավուն բջիջներ, բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ

Pluteaceae *Volvariella bombycina*	Բաց դեղնակրեմագույն, փարթամ, թափանցիկ, նուր, վեր բարձրացող, ավելի ուշ՝ հատիկավոր, եզրը՝ հավասար, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 7.9 մմ/օր; առաջացնում է պրիմորդիումներ	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն	Բլաստիկ քլամիդոսպորներ
Psathyrellaceae *Coprinellus bisporus*	Սպիտակ, դեղնավուն, բամբակաքեչայանման, ավելի ուշ՝ տեղ-տեղ մուգ դեղին, ժանգագույն; $ԱԱ_{միջ}$= 4.2-4.6 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են; առկա են կանոնավոր հիֆային օղակներ, ալոցիստեր, հիֆոցիստեր	Քլամիդոսպորներ, *Ozonium* տիպի միցելիում

Coprinellus curtus	Սպիտակ, քեչայանման, ավելի ուշ` տեղ-տեղ դեղնադարչնագույնից բաց ժանգագույն, դեպի եզրը հատիկավոր, ալրանման շրջաններով; $ԱԱ_{միջ}$= 4.2-4.7 մմ/օր; առաջացնում է խմբերով պտղամարմիններ	Ճարմանդները կեղծ են կամ բացակայում են; առկա են կանոնավոր հիֆային օղակներ, հիֆոցիստեր, բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ	*Ozonium* տիպի միցելիում Նկարագրված չէ
Coprinellus disseminatus	Սպիտակ, բամբականման, փարթամ, կենտրոնում նոսր, ավելի ուշ` դեղնավուն, տեղ-տեղ ժանգադարչնագույն, եզրը` հավասար, ագարը` տեղ-տեղ մուգ դարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 5.6-5.8 մմ/օր	Ճարմանդները` կլորավուն, ոչ հաճախակի, միակողմանի; առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ; առկա են կանոնավոր հիֆային օղակներ	*Ozonium* տիպի միցելիում Նկարագրված չէ

Coprinellus domesticus	Սպիտակ, քեչայանման, ավելի ուշ՝ միցելիումն ու ագարը դեղնավուն, տեղ-տեղ ժանգագույն; $ԱԱ_{միջ}$= 5.4-5.6 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ՝ ոտիկի հիմքում *Ozonium*-ի ժանգագույն միցելիումով	Ճարմանդները բացակայում են; առկա են կանոնավոր հիֆային օղակներ, հիֆոցիստեր Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ	*Hormographiella verticilliata* արթրոսպորներ, *Ozonium* տիպի միցելիում *H. verticilliata* արթրոսպորներ
Coprinellus ellisii	Սպիտակ, խիտ բամբականման, ավելի ուշ՝ բաց դեղնավունից մուգ նարնջագույն, տեղ տեղ ժանգագույն, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 6.4 մմ/օր; հազվադեպ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են; առկա են եզակի ալոցիստեր, կանոնավոր հիֆային օղակներ, բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ	Քլամիդոսպորներ, *Ozonium* և *Hormographiella* տիպերի սինանամորֆներ *Hormographiella* տիպի արթրոսպորներ

Coprinellus flocculosus	Սպիտակ, ավելի ուշ՝ տեղ-տեղ թույլ դեղնաժանգագույն, բամբականման, աճը՝ ճառագայթաձև, կենտրոնում՝ նոսր, սեղմված, ագարը՝ թույլ դեղնավուն; $ԱԱ_{\text{միջ}}$= 4.7-5.0 մմ/օր; առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ	Ճարմանդները կեղծ են կամ բացակայում են; առկա են կանոնավոր և անկանոն հիֆային օղակներ, ալոցիստեր, հիֆոցիստեր Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, մազմզոտ պելետներ	*Ozonium* տիպի միցելիում Նկարագրված չէ
Coprinellus micaceus	Սպիտակ, խավոտ, բամբականման, եզրը՝ հավասար, աճը՝ ճառագայթաձև, ավելի ուշ՝ կենտրոնում սեղմված, ագարը՝ մուգ կարմրադարչնագույն; $ԱԱ_{\text{միջ}}$= 4.3-5.3 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ ոչ հաճախադեպ, միակողմանի, կլորավուն; առկա են կանոնավոր հիֆային օղակներ, տեսակին բնորոշ հիֆերի եռակի ճյուղավորում, հիֆոցիստեր Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն, մազմզոտ պելետներ	Քլամիդոսպորներ, *Ozonium* տիպի միցելիում Նկարագրված չէ

Coprinellus radians	Սպիտակ, փարթամ, ավելի ուշ՝ կենտրոնից դեղնող, մուգ դեղին, դարչնաժանգագույն, եզրը՝ բարձրացող, նոսր, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 4.7 մմ/օր	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են; առկա են ալոցիստեր, հիֆոցիստեր, կանոնավոր հիֆային օղակներ, բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն մազմզոտ պելետներ	*Ozonium*, հազվադեպ *Hormographiella* տիպերի սինա-նամորֆներ Նկարագրված չէ
Coprinellus aff. *radians* I (շտամներ 1-2PS, 1-1C)	Սպիտակ, փարթամ, ճառագայթաձև, ավելի ուշ՝ կենտրոնում մուգ կիտրոնադեղնավուն, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 5.4-6.4 մմ/օր	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են: Առկա են ալոցիստեր, հիֆոցիստեր, կանոնավոր հիֆային օղակներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ	Քլամիդոսպորներ, *Ozonium* տիպի միցելիում Նկարագրված չէ

Coprinellus aff. *radians* II (շտամ C35)	Սպիտակ, ավելի ուշ՝ դեղին, մուգ նարնջագույն, բամբականման, խիտ; ԱԱ$_{միջ}$= 6.3 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանղները բացակայում են կամ կեղծ են; առկա են կանոնավոր հիֆային օղակներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ	*Ozonium* և *Hormographiella* տիպերի սինանամորֆներ *Hormographiella* տիպի արթրոսպորներ
Coprinellus aff. *radians* III (շտամ Cb$_1$)	Սպիտակ, փարթամ, ավելի ուշ՝ մուգ դեղին, դեղնանարնջագույն, բամբակաքեչայանման, կոնցենտրիկ շրջաններով; ԱԱ$_{միջ}$= 6.4 մմ/օր; առաջացնում է եզակի պտղամարմիններ	Ճարմանղները բացակայում են կամ կեղծ են; առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, հարթ պելետներ	*Ozonium* և *Hormographiella* տիպերի սինանամորֆներ *Hormographiella* տիպի արթրոսպորներ

Coprinellus xanthothrix	Սպիտակ, բամբակաքեչայանման, նոսր, գրեթե թափանցիկ, տեղ-տեղ դեղնավուն, դեղնանարնջագույն, ավելի ուշ՝ բաց դարչնագույն երանգով, եզրը՝ հավասար, ագարը՝ բաց շագանակագույն; ԱԱ$_{միջ}$= 5.3-6.5 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են; առկա են բազմաթիվ կանոնավոր հիֆային օղակներ և ապիկալ փքումներ Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն մազմզոտ պելետներ	Քլամիդոսպորներ, *Ozonium* և *Hormographiella* տիպերի սինանամորֆներ *Hormographiella* տիպի արթրոսպորներ

Coprinopsis atramentaria	Սպիտակ, բամբակաքեչայանման, նոսր, ավելի ուշ՝ կենտրոնում՝ դեղնավուն, ագարը՝ անփոփոխ; $ԱԱ_{միջ}$= 2.5-3.5 մմ/օր	Հիֆերը՝ վակուոլացված են; ճարմանդները՝ փոքր, կլորավուն, միակողմանի, հիմնականում առանց անցքի, հաճախադեպ Խորքային կուլտուրայում միցելիումն առաջացնում է հարթ մակերեսով պելետներ	Նկարագրված չէ Նկարագրված չէ
Coprinopsis cinerea	Սպիտակ, խավոտ, բամբակազամշանման, ավելի ուշ՝ կրեմագույն, բաց դարչնագույն, ագարը՝ դարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 4.1-4.5 մմ/օր; առաջացնում է կլորավուն, մուգ դարչնագույն սկլերոցիումներ և պտղամարմիններ	Ճարմանդները՝ փոքր, կլորավուն, ծգված, առանց անցքի, միակողմանի, հաճախադեպ; առկա են պարզ հիֆային օղակներ, բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է փխրուն, հարթ պելետներ	Ատիպիկ արթրոսպորներ՝ *Hormographiella aspergillata*, քլամիդոսպորներ *H. aspergillata* արթրոսպորներ

Coprinopsis cothurnata	Սպիտակ, բրդաքեչայանման, ագարը՝ անփոփոխ; $ԱԱ_{միջ}$= 3.3 մմ/օր	Ճարմանդները բացակայում են կամ կեղծ են; զուգահեռ հիֆերը միացած են բազմաթիվ անաստոմոզերով՝ առաջացնելով հիֆային ծգոններ; առկա են պարզ և բարդ հիֆային օղակներ	Ատիպիկ բլաստիկ քլամիդոսպորներ
Coprinopsis strossmayeri	Սպիտակ, մետաքսանման, լավ արտահայտված միցելիալ ծգոններով, ավելի ուշ՝ բաց, կենտրոնում՝ մուգ կրեմագույն, ագարը բաց դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 5.3-7.2 մմ/օր; առաջացնում է կրեմագույն պրիմորդիումներ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, կլոր, աղեղնաձև, անցքով; առկա են պարզ հիֆային օղակներ, բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ	Քլամիդոսպորներ Նկարագրված չէ

Psathyrella candolleana	Սպիտակ, ավելի ուշ՝ դեղնավուն, բամբականման, փարթամ, կենտրոնում՝ նոսր, եզրը՝ անհավասար, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 5.5-7.2 մմ/օր	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հիմնականում առանց անցքի, հաճախադեպ; առկա են պարզ հիֆային օղակներ, գլանաձև կամ ծողիկաձև բյուրեղներ	Քլամիդոսպորներ
Strophariaceae *Hypholoma fasciculare*	Սպիտակ, մետաքսանման, սաղափե փայլով, ճառագայթաձև սեգմենտավորված, ալիքավոր, ավելի ուշ՝ միցելիալ ծգոններով, միցելիումը և ագարը՝ բաց լիմոնագույնից մուգ դեղնադարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 2.0-2.7 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հազվադեպ երկկողմանի, հաճախադեպ, անցքով կամ առանց անցքի; առկա են տձև, ասեղնաձև, քառանիստ, ութանիստ բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ

Hypholoma lateritium	Սպիտակ, բամբակաթավշանման, բաց դեղնանարնջագույն, ագարը՝ դեղինից շագանակագույն; $ԱԱ_{միջ}$= 2.5 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ կլորավուն, միակողմանի, հաճախադեպ; առկա են բյուրեղներ	Արթրոսպորներ
Kuehneromyces mutabilis	Սպիտակ, թավշյա, ճառագայթաձև, ալիքավոր; $ԱԱ_{միջ}$= 1.2-2.5 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն, հաճախադեպ; առկա են մանր բյուրեղներ	Արթրոսպորներ
Pholiota populnea	Սպիտակ, բրդաքեչայանման, տեղ-տեղ խիտ, հետագայում՝ փոշենման, տեղ-տեղ դարչնագույն, ագարը՝ գունատ; $ԱԱ_{միջ}$= 2.6 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն, անցքով կամ առանց անցքի; առկա են հիֆային օղակներ, ալոցիստեր, ութանիստ բյուրեղներ	Քլամիդոսպորներ

Schizophyllaceae *Schizophyllum commune*	Սպիտակ, խավոտ, խիտ, բամբակափաթիլանման, ագարը՝ անգույն, ԱԱ$_{միջ}$= 6.5-7.5 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ կլորավուն, հաճախադեպ, միակողմանի, մանր և հսկա, հիմնականում առանց անցքի; առկա են տեսակին բնորոշ հիֆային ելուստներ՝ տուբերկուլներ, քառանիստ բյուրեղներ	Քլամիդոսպորներ
Tricholomataceae *Lepista nuda*	Բաց մանուշակագույն, խավոտ, եզրը՝ հավասար; ԱԱ$_{միջ}$= 1.5-1.7 մմ/օր	Ճարմանդները՝ միակողմանի, երկարավուն, մեդալիոնաձև, փոքր անցքով, հիֆերի մակերեսը՝ գորտնուկավոր; առկա են քառանիստ և տձև բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսապորներ
Boletales **Suillaceae** *Suillus luteus*	Սպիտակ, թավշյա, խիտ, թմբիկաձև, կրեմագույն, ավելի ուշ՝ կակաոյի երանգով, մուգ դարչնագույն էքսուդատով, եզրը՝ հավասար, բաց կրեմագույն, ագարը՝ մուգ դարչնագույն; ԱԱ$_{միջ}$= 1.0 մմ/օր	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն, հաճախադեպ; առկա է տեսակին բնորոշ հիֆերի զույգ ճյուղավորում	Նկարագրված չէ

Polyporales **Polyporaceae** *Daedalea quercina*	Սպիտակ, բրդաքեչայանման, խիտ կոնցենտրիկ շրջաններով, թույլ ծալքավոր, եզրը՝ հավասար, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 4.8 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված; ճարմանդները՝ հաճախադեպ, իսկա և փոքր, միակողմանի; առկա են հիֆային օղակներ, ութանիստ բյուրեղներ	Քլամիդոսպորներ
		Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ	Քլամիդոսպորներ

Fomes fomentarius	Սպիտակ, բամբականման, կենտրոնում՝ սեղմված, ավելի ուշ՝ կրեմադարչնագույն, բրդաբամբակազամշանման, զամշակաշվենման, ագարը՝ դեղնադարչնագույնից մուգ դարչնագույն, եզրը՝ վատ արտահայտված; ԱԱ$_{միջ}$= 5.6-7.5 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ մանր, կլորավուն կամ աղեղնաձև, հիմնականում՝ առանց անցքի, միակողմանի; առկա են հիֆային հանգույցներ, դարչնագույն կլորավուն կուտիկուլային բջիջներ, կանոնավոր հիֆային օղակներ, ծողիկաձև, քառանիստ և ութանիստ բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ
		Խորքային կուլտուրայում առաջացնում է սնամեջ, հարթ պելետներ; առկա են գլանաձև կուտիկուլային բջիջներ	Արթրոսպորներ

Fomitopsis pinicola	Սպիտակ, բրդաբամբականման, ավելի ուշ՝ բրդաքեչայանման, եզրը՝ սեղմված, ագարը՝ անգույն; $ԱԱ_{միջ}$= 4.6-6.3 մմ/օր; առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները հաճախադեպ, միակողմանի, կլորավուն, աղեղնաձև, հսկա կամ փոքր; առկա են ծոդիկաձև, քառանիստ բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով հարթ պելետներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ Քլամիդոսպորներ
Ganoderma adspersum	Սպիտակ, բամբակաքեչայանման, ավելի ուշ՝ զամշակաշվենման, կրեմադեղնավուն, եզրը՝ սեղմված, հավասար, ագարը՝ դեղնավուն, տեղ-տեղ բաց դարչնագույն, կենտրոնում՝ ճաքճքած; $ԱԱ_{միջ}$= 4.9-6.0 մմ/օր	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ հաճախադեպ, միակողմանի, փոքր, կլոր, անցքով և առանց անցքի; առկա են հիալինային կլորավուն կուտիկուլային բջիջներ կամ քլամիդոսպորանման փքումներ, քառանիստ բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է մանր, խիտ միջուկով, հարթ, կաշվենման պելետներ; առկա են հիֆային փքումներ	Քլամիդոսպորներ Քլամիդոսպորներ

Ganoderma applanatum	Սպիտակ, տեղ-տեղ թափանցիկ, բամբակաալրափոշենման, ավելի ուշ՝ ծիթապտղադարչնագույն, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ տեղ-տեղ դարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 3.5-6.0 մմ/օր; առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ միակողմանի, կլոր, անցքով և առանց անցքի, հաճախադեպ; առկա են կանոնավոր հիֆային օղակներ, քառանիստ բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է թույլ մազմզոտ կամ հարթ կաշվենման պելետներ	Քլամիդոսպորներ Նկարագրված չէ

Ganoderma lucidum	Սպիտակ, բրդաբամբականման, կենտրոնում՝ ավելի խիտ, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ տեղ-տեղ բաց կամ մուգ դարչնագույն; $ԱԱ_{միջ}$= 4.8-6.1 մմ/օր; առաջացնում է պրիմորդիումներ և պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ միակողմանի, կլոր, անցքով և առանց անցքի, հաճախադեպ; առկա են ականտոցիտանման կառուցվածքներ, կլորավուն հաստապատ, դարչնագույն կուտիկուլային բջիջներ, հիֆային օղակներ և փքումներ, քառանիստ և ութանիստ բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ
		Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, անհարթ, կաշվենման կամ փխրուն միջուկով, բամբակափաթիլանման կամ հարթ, սնամեջ պելետներ; առկա են ապիկալ հիֆային փքումներ, ութանիստ բյուրեղներ	Նկարագրված չէ

Ganoderma resinaceum	Սպիտակ, կրեմակիտրոնադեղնավուն, բամբակափոշենման, աճը՝ ճառագայթաձև, եզրը՝ սեղմված կամ բարձրացող, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 8.5-9.6 մմ/օր	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանդները՝ միակողմանի, կլոր, անցքով կամ առանց անցքի, հաճախադեպ; առկա են քառանիստ և ութանիստ բյուրեղներ Խորքային կուլտուրայում առաջացնում է հարթ, կաշվենման պելետներ; առկա են հիֆային փքումներ	Քլամիդոսպորներ (գաստերոսպորներ) Քլամիդոսպորներ (գաստերոսպորներ)
Laetiporus sulphureus	Բաց դեղնավուն, ծիրանագույն, ավելի ուշ՝ նարնջագույն, ալրափոշենման, հատիկավոր, եզրը՝ թափանցիկ, ագարը՝ անփոփոխ, թույլ նարնջագույն; $ԱԱ_{միջ}$= 4.8-6.1 մմ/օր	Ճարմանդները՝ եզակի, փոքր, առանց անցքի, միակողմանի Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով, հարթ, նարնջագույն պելետներ	Արթրոսպորներ, ալևրիկ քլամիդոսպորներ՝ *Sporotrichum versisporum* Ալևրիկ քլամիդոսպորներ՝ *S. versisporum*

Lentinus tigrinus	Սպիտակ, բամբականման, ավելի ուշ՝ բաց դարչնագույն, կաշվետիպ, ագարը՝ անփոփոխ; ԱԱ$_{միջ}$= 6.0-7.2 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանղները՝ կլորավուն, անցքով կամ առանց անցքի, միակողմանի; առկա են ասեղնաձև բյուրեղներ	Քլամիդոսպորներ
Piptoporus betulinus	Սպիտակ, բամբակափաթիլանման, կենտրոնում՝ խիտ, եզրը՝ հավասար, ագարը՝ անփոփոխ; ԱԱ$_{միջ}$= 3.6-4.9 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Հիֆերը՝ վակուոլացված, ճարմանղները՝ միակողմանի, հաճախադեպ, օվալ, անցքով, փոքր՝ կլորավուն և իսկա՝ աղեղնաձև; առկա են օվալաձև կուտիկուլային բջիջներ, քառանիստ և ութանիստ բյուրեղներ	Արթրոսպորներ, բլաստոսպորներ
		Խորքային կուլտուրայում առաջացնում է խիտ միջուկով մազմզոտ պելետներ; առկա են գլանաձև կուտիկուլային բջիջներ	Արթրոսպորներ

Polyporus squamosus	Սպիտակ, քեչայանման, ավելի ուշ՝ փոշենման, կենտրոնում՝ նարնջադարչնագույն, եզրը՝ արտահայտված, ագարը՝ տեղ-տեղ շագանակագույն; $ԱԱ_{միջ}$=7.5-7.8 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն, հաճախադեպ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ
Polyporus varius	Սպիտակ, սկզբում քեչայանման, կոնցենտրիկ շրջաններով, ավելի ուշ՝ կաշվետիպ, բաց դարչնագույն, ագարը՝ բաց դարչնագույն; $ԱԱ_{միջ}$=5.0 մմ/օր; հեշտությամբ առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, կլորավուն, հաճախադեպ; առկա են բյուրեղներ	Արթրոսպորներ

Trametes gibbosa	Սպիտակ, բաց կրեմագույն, բամբակաբրդաքեչայանման, ավելի ուշ՝ ալրանման, կրեմագույն, ագարը՝ դեղնավուն; $ԱԱ_{միջ}$= 5.0-5.8 մմ/օր	Ճարմանդները՝ միակողմանի, մանր, կլորավուն, հաճախադեպ Խորքային կուլտուրայում առաջացնում է հարթ, սնամեջ պելետներ; առկա են հիֆային փքումներ	Քլամիդոսպորներ Նկարագրված չէ
Trametes hirsuta	Սպիտակ, բամբակաբրդանման, դեպի եզրը նոսրացող, ավելի ուշ՝ խիտ, բրդաքեչայանման, ագարը՝ անփոփոխ; $ԱԱ_{միջ}$= 3.0-4.3 մմ/օր	Ճարմանդները՝ միակողմանի, մանր, կլորավուն, հաճախադեպ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ
Trametes versicolor	Սպիտակ, բրդանման, ավելի ուշ՝ ալրազամշանման, եզրում՝ նոսրացող, ագարը՝ անփոփոխ; $ԱԱ_{միջ}$= 4.7- 6.3 մմ/օր	Ճարմանդները՝ միակողմանի, մանր, կլորավուն, հաճախադեպ; առկա են ապիկալ հիֆային փքումներ, քառանիստ և ձողիկաձև բյուրեղներ	Արթրոսպորներ, քլամիդոսպորներ

Russulales **Hericiaceae** *Hericium erinaceus*	Սպիտակ, ալրաբամբականման, բամբականման, ագարը՝ դարչնագույն; ԱԱ$_{միջ}$=1.4 մմ/օր; առաջացնում է պտղամարմիններ	Ճարմանդները՝ միակողմանի, հաճախադեպ; առկա են հիֆային փքումներ	Քլամիդոսպորներ

(*) ԱԱ$_{միջ}$ - միցելիումի աճման միջին արագություն

